ԱՐԱՐԱՏ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱՋԴԱՑԻՆ։

ԹԻՒ Ե։ — ՇՐՋԱՆ Ը։ **1874** ՏԱՐԻ Է։ — ՄԱՅԻՍ 31։

ԿՐՕՆԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՈՑ

ՀԱՅՈՑ ԱՆՆՈՒՆ ԱՌԱՔԵԼՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՀԱՆԴԵՐՁ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՄԲ.

(Շարունակութիւն)։

ԳԼ. ԼԵ

Ե՞րբ՝ ի ժողով է Սիս, ո՞ւ ուսմունքեան ո՞ր եկեղեցական կանոն։

(Ամք Տեառն 1204)։— Օ՛աքարիա ըստ պատահար երևելի իշխան Հայոց՝ ի զօրավարութեան վ՛րաց՝ բազում ի նոցանէ կրեալ մեղադրութիւն, յաղագս չունելոյ ընդ ինքեանս և Հայական զօրացն ընդ իւրով իշխանութեամբ ըստ նոցայն սովորութեան զքահանայս և զշարժական սեղան, սակս տեսանելոյ զպատարագ և ընդունելոյ զսուրբ հաղորդութիւն, և նախանձ բարի յանձին բերեալ առ այս և հատու ևս լեալ, եթէ էր յառաջադոյն և յայդմ մեր այն սովորութիւն ի բացօթեայս պատարագել, այլ յետ Խազրատունեաց այն անհետացեալ, ապա գրէ թուղթ առ արքայ Լ՛եւոն և առ Յովհաննէս կաթուղիկոս, չև ևս լուեալ զկաթուղիկոսութիւն Դաւթի ի Սիս, առաքեալ անդր առ նոսա զդեսպանս, խընդրեաց ի նոցանէ զերեսին զայսօրիկ առաջարկութիւնս կարի հարկաւորագոյնս յայնմ ժամանակի. նախ՝ շրջեցուցանել ընդ իւր զսեղան պատարագի. երկրորդ՝ զի քահանայք հանդիսիւ կատարեսցին զպատարագն, որպէս առնէին վ՛իրք սարկաւագք և դպրօք. և երրորդ՝ զօծն վ՛արիսման և խաչն կատարեսցին ըստ աւուրց պատշաճի ընդ վ՛րայ։

Ապա Լ՛եւոն արքայ ի վերայ այսօրինակ խնդրանաց Օ՛աքարեայ, խորհրդեամբ Դաւթի կաթուղիկոսի վաղվաղակի հրամայեաց առնել ժողով առ ինքն ի Սիս ի շրջակայ եպիսկոպոսաց, վարդապետաց և վանահարց և իմաստնոց և այլոց բազմաց. յորոց ի գումարման առաջի եղեալ զինդիրն Օ՛աքարեայ, և ուղիղ և բա-

նաւոր պահս դատել համաձայն առաքելական կանոնաց, ընդ որս և զինչ ինչ քննելիս՝ նուազելոյս յայնմ ժամանակի յահէ պղծզեաց յարևելս ուրիք ուրիք՝ ի քննութիւն մատուցեալ, վճռով հաստատեցին ի ժողովն զուարճն զայսոսիկ բանս ի կանոնադրութիւն եկեղեցւոյ։

ա. Մատուցանել զպատարագ սարկաւագօք և դպրօք և քահանայական զգեստիւք, որպէս սովորութիւն էր յառաջն յաղգի մերում, և որպէս օրէնէ ամենայն Քրիստոնէից։

բ. Ունել հրաման պատարագ մատուցանելոյ վրանաւ ի բանակի, ի վերայ շարժական սեղանոյ ի բացօթեայս։

գ. Մատուցանել պատարագ ոչ միայն վանն ննջեցելոց, այլ և վանն կենդանեաց։

դ. Օրէն վերափոխման սրբոյ Աստուածածնին կատարել յՕգոստոսի ԺԵ, յորում աւուր և պատահեացի, և զկաչէն ի Սեպտեմբերի ԺԴ, յերկիր տէրութեան Յունաց և վերաց։

ե. Պահել ի Հրազալոյցն Յայտնութեան և Օգաւիթ մինչև ցերեկոյ, և յերեկոյին ոչ այլ իւիք լուծանել՝ բայց եթէ ձկամբք և ձիթով։

զ. Յարգել զպատկերս Փրկչին և սբոց ամենայնի։

է. Մի առանց դպիր ձեռնադրելոյ սարկաւագ ձեռնադրել։

ը. Մի ստանալ կրօնաւորաց առանձին ինչ ստացուած, և կալ միաբան ի վանս և չուտել ևս զմիս։

Ընդ այսոսիկ հաստատեցին զայսոսիկ կանոնս ժողովն հանդերձ թղթով, զարձան առ նա յարևելս։

ԳԼ. ԼԶ.

Ընդ որում ժողով է լուծ վասն պահելոյ ըստ կանոնս ժողովոյն Սահ։

(Ամք Տեառն 1205)։—Ընկալեալ Օգաբարեայ զթուղթ և զվճիռ ժողովոյն և զթուղթս երկուց Պատուղիկոսացն Յովհաննու ի Հռոմկլայ և Դաւթի ի Սիս հանդերձ պատգամաւ արքային Լեւոնի ի ձեռն դեսպանացն իւրոց, վասն որոյ առաքեալքն էին, ուրախութեամբ սրտի ժողով մեծ առնէ ի Լոռի քաղաքի վասն ընդունելոյ ըստ իւրումն ըղձի զկանոնսն. ուր հասին ըստ իշխանական հրամանի՝ Սանահնեցին Գրիգոր Տուտէորդի եպիսկոպոս Հաղբատայ, Յովհաննէս վարդապետ Սանահնի, և Դաւիթ Քոբայրեցի, Սարգիս եպիսկոպոս Ընդ, Վրթանէս Քջնոյ, Գրիգոր Դունայ, Յովհաննէս Կարուց, Ներսէս վանահայր Հաւուց Թառոայ, Տուրքիկ Թռեղենեաց, Մոնոնիկ Գրիգոր Կեչառեցի, Սարգիս Սևանեցի, ընդ որս և Խաչատուր վարդապետ Տարոնեցի առաջնորդ Հոզարծնի վանաց, և Մխիթար վարդապետ Գանձակեցի Գօշ՝ առաջնորդ Գեհակոյ, և այլ բազում վարդապետք, վանահարք և քահանայք։

Սոքա հարք ժողովոյն իբրև ընթերցան զթուղթս և զվճիռս ժողովոյն Սսոյ և եպիսկոպոսացն և թագաւորին, ամենք հաւանեցան այնմ՝ մանաւանդ Խաչատուր և Մխիթար վարդապետք. այլ որոց անհաւան գոան, գլխաւորք էին Տուտէորդին Գրիգոր, Դաւիթ Քոբայրեցի, Յովհաննէս Սանահնի և այլք բազումք. որովք և երկպառակեալք քակեցան ի միմեանց։

Ընդ հետ այսորիկ Օ.աքարիա սպա-
սալար զերկպառակիչսն կալեալ և կա-
պեալ ի բանտի, յամենայն վանորայս որ
ընդ իւր իշխանութեամբ պատգամաւորս
առաքէ և հրամայէ զկանոնն կատարել և
զԱստուածածնին և զԽաչի զօրսն ըստ
աւուրց պաշտաձի կատարել և ի կիւրա-
կէս: Ըստ որոց և թշնամութիւնք, երկ-
պառակութիւնք, աղաղակք և կռիւք և
այլ արատաւուց արժանի գործք գործե-
ցան՝ ասէ Ակիրակոս պատմագիր:

ԳԼ. ԼԲ.

Զորդւոջ Յովաննէ, վասն ուրն կանո-
նաց Յովովոյն Սոյ:

(Ամք Տեառն 1207):— Ընդ ի խաղա-
դիլ Օ.աքարեայ Սպասալարի զշփոթու-
թիւնսն և զաղմուկս յեկեղեցականաց
Հայոց ի վանորայսն Հայաստանի յարե-
ւելս, որք յայնժամ առաւել ևս սաստե-
կացեալն էր ի նոսին, և վերստին ընդունե-
լոյ ամենեցուն նոցա յեկեղեցական արա-
րողութիւնս զուխն կանոնն Յովովոյն
Սոյ, որոց վասն և արարեալ էր Ժողով
յառաջնում ի Լոռի, հրամանն եհան
վերստին գումարել եպիսկոպոսաց և
վարդապետաց Յովնի առ ընդունելութիւն
կանոնացն՝ որպէս ասացաւ՝ ի համօրէն ե-
կեղեցիս Հայաստանեայց:

Ընդ գումարիցան նոյն եպիսկոպոսք և
վարդապետք առաջնոյ Յովովոյն, այլ
յայսմ նուագի ոչ եկին ի Ժողով անդր
Ամխիթար Գօշ, որում ամենեքեան պատ-
կառ կային առ ծերութեանն՝ և առանց
նորին հաւանութեան չհամէին ընդ կա-
նոնսն. ապա Օ.աքարիա սուիպեաց ըզ-
վարդապետս Ժողովոյն ընդունել զկա-
նոնս, որք խնդրանօք իւրովք առաքեալքն
էին, և տալ ձեռագիրս համաձայն թըղ-
թոց Ժողովոյն: Առ այս թէև Ժողովն
բովանդակ առանց ներկայութեան Գօշն
Ամխիթարայ ըստ ամենայն սահմանաց ըս-
պասալարին ոչ տային զհաւանութիւն՝
ընդունելութեան, այլ նորա ցուցեալ նո-
ցա զթուղթս հաճութեան Ամխիթարայ
առ ինքն իսկ զրեալ. և ի չհաճել նոցա
ընդ այս ևս, կոչեալ զԱմխիթար յասպա-
րանս իւր ի վանացն նորա, և զկարծիս նո-
րա և հաւանութիւն ի բերանոյն իսկ լը-
սեալ, ապա պատուիրէ նմին Ամխիթարայ
երթալ արձակել միանգամայն զԺողովն
յիւրաքանչիւր տեղիս, չանսացեալ այլ ևս
հաւանութեան Ժողովոյն: Ընդ Ամխի-
թար զպատգամն միայն առաքեալ զՕ.ա-
քարիայ առ Ժողովն, յորմէ որեաց զնոսա
գնալ ի վանս այր իւրաքանչիւր:

Ւայց Օ.աքարիա սպասալար յետ ա-
ւուրց ինչ զանհաւանս զամենեսին գտա
ի միմեանց արտաքսէ ի վանացն յայլ և այլ
տեղիս. յորոյ ոմանք ըստ խնդրանաց եպ-
բօր Օ.աքարիա Իւանէի անդրէն ի տե-
ղիսն դարձեալք, ըստ հաճութեան Օ.ա-
քարիայ զկանոնն կատարեցին ըստ Սոյ
վճռոյն, և ոմանք ըստ իւրեանց սովորու-
թեան զպատարագն առանց պաշտօնէի
մատուցին և առանց քահանայական զգես-
տուց, որք յետոյ անհետացան և ի նոցանէ:

ԳԼ. ԼԸ.

Նշխարք Ժողով ի Սիս, ուր եղան գտան և
հինգ կանոնք վասն եկեղեցականաց:

(Ամք Տեառն 1243):— Ի քսաներեքե-
րորդումն ամի հայրապետութեան Կոս-

տանդեայ Կաթուղիկոսի Ս. Խարձբերդցւոյ՝ պէսպէս անկարգութիւնք մտեալ և յազգ մեր, և յովուութիւնք յեկեղեցականս և ի ժողովուրդս, որպէս տարածեալ էին յայնմ ժամանակի և յաշխարհ բովանդակ, մեծամեծ թուլութիւնք յայսպիսեացդ լինէին։ Ապա և Ստեփանոս Կաթուղիկոս խնամ մեծ ի վերայ հօտին իւր յուցեալ վասն ղպատուցանելոյ զհատուցեալսն իւր, եղեալ յաթոռանիստն Հռոմկլայէ, գնայ առ արքայ Հեթում ի Սիս. որոյ խորհրդով և հրամանաւ գումարէ ժողով մեծ ի դարման անկարգութեանցն, յեպիսկոպոսաց, յառաջնորդաց, ի վանօրէից և յիմաստունս վարդապետաց, յորս երևելի լինի և մեծն Վարդան Խարձբերդցի. ևս և յաշխարհական իշխանաց ալևմտեայ կողմանց հանդերձ արքայիւ և արքայորդւով յամի 1243։

Ուրանօր ապա յառնան ժողովոյն զիւրաքանչիւր անկարգութիւնսն յառաջ բերեալ և հերքեալ, ընդդէմ նոցին ամենայնի կարգեցին ժողովով զքսան և հինգ կանոնս. որք թէպէտ և յառաջադոյն ևս կային յաղգի մերում, այլ ի շփոթութեանց և յանկանիլ աշխարհին Հայոց ընդ այլ և այլ իշխանութեամբ և ի ձեռս խառն ազգաց, աղաւաղեալք էին այն ամենայն կանոնք, զորս հաստատուն և վըճռովք կանոնադրեցին յայս երկրորդ ժողով Սոյ. որք ըստ Ակիրակոսի ականատես պատմագրի Գանձակեցւոյ՝ են օրինակ զայս։

ա Ձեռնադրութիւնք առանց դրամոյ լինին։

բ. Վկայաբերն միայն ընտրողացն յեպիսկոպոսութիւն։

գ. Եպիսկոպոսունք ձեռնադրեսցին կէթ երիտասեայ, աշխարհական երէց քան և հինգամեայ, և սարկաւագք քսանամեայ։

դ. Ընժանաւորք միայն ձեռնադրեսցին քահանայ և սարկաւագ։

ե. Քահանայք ծամ կատարեսցին ըստ խորհուրդ եկեղեցւոյ՝ բայ ի վանդէ մազհուան։

զ Խորհուրդք եկեղեցւոյ պատկառանօք պաշտեսցին։

է. Ընտզանն մկրտութեան հաստատուն լինի յեկեղեցւոջ։

ը. Պատկ մի՛ լինի ի մերձաւոր ազգականս ցեօթն ծնունդ . . . ։

ը. Եպիսկոպոսունք կամ երիցունք յայլոց թեմս մի՛ իշխեսցին կատարել ընպաշտօն իւրեանց առանց հրամանի։

ժ. Յամենայն տեղիս ուսուցիչք կարգեսցին։

ժա. Օրսուրբ դիրս միայն դիտունք և ուղղափառք գրեսցին։

ժբ. Երկիցս ի տարւոջ շրջեսցին եպիսկոպոսունք յայցելութիւն ի թեմս իւրեանց։

ժգ. Ծներ և դիտուն լեզին խոստովանահարք, որք և յամենայն կիւրակէի յորդորեսցեն զժողովուրդն ի խոստովանութիւն։

ժդ. Օրսուրբ հաղորդութիւնն առանց բուլվառի և մոմեղինի մի՛ տարցին առհիւանդս։

ժե. Պսակն իկ և մկրոյղք պատժեսցին։

ժզ. Ընհոգիք աշխարհական դատաստանաւ պատուհասեսցին։

ժէ. Պահք առանց ձկան և ձկիթոյ պահեսցին՝ բայ ի հարկէ հիւանդութեան։

ԺԲ. Վահանայք եթէ պարապեսցին վաճառականութեան կամ որսորդութեան՝ զկեսցին ի ժողովրդենէ իւրեանց:

ԺԲ. Ժողովուրդք մի՛ ըստ հաճոյս իւրեանց ընտրեսցեն ժողովրդապետս այսինքն՝ Ծխատէր, այլ՝ հրամանաւ եպիսկոպոսին:

ԽԳ. Վահանայք միանգամ ի տարին մանաւանդ խնամով քննեսցին զընթացս ժողովրդեան իւրեանց, թէ յորմէ զգաստանան և յորմէ նուազին:

ԽԴ. Ժողովրդականք տայցեն հասս քահանային:

ԽԵ. Վահանայք հոգասցեն վասն պիտոյից եպիսկոպոսացն:

ԽԶ. Նոյնպէս եպիսկոպոսունք վասն Հայրապետական Աթոռոյն:

ԽԷ. Ներկքին ազօթիքն՝ առաւօտու և յերեկոյի՝ այս ինքն Տ֊ողհանամ֊ պէէնն և Ա֊ը յայնէց ծըպոն, յորոց ի վերջն երգեալք զԱ֊ը Աստուածն, աւարտեսցեն ի դէմս Որդւոյ՝ յարելով զվերն զբառսդ Ուէէստոս Աստուածն ծը. զի յայտնի ծանիցի թէ ի դէմս Որդւոյ ասի խաչեցաւն:

ԳԼ. ԼԹ.

Նշդըդ Ժողով է Սէս յաղագս վրդովեպոպ֊ընեան հաստատ Հոգ֊ւոյն սրբոյ:

(Ամք Տեառն 1251):—Այս խնդիր շարժեաւ, ասէ Ա֊արդան մերս պատմագիրս, ի մեծ պապէն Հռովմայ (Ինոկենտիոս Դ.) ի թուին Հայոց Ը. և գրեաց յաժենայն ազգս քրիստոնէից, առ Կոստանդին Կաթուղիկոս և առ արքայն մեր Հեթում, թէ պարտ է զամենասրբոյն Հոգին Աստուած՝ խոստովանել ի Հօրէ և Յորդէ բղխեալ, և ոչ երկու հաճոյ, ասէ, Յունաց և Ասորւոց, բաց ի Հայոց:

Ընդ որ արքայ և Հայրապետն գումարեն ի Սիս ժողով Եպիսկոպոսաց և Ա֊արդապետաց Հայոց, յորում և ինքն գտանէր Ա֊արդան, հաւանեցան ընդ այն: զորմէ Կաթուղիկոսն և Արքայ գրեցին ա֊պա առ եպիսկոպոսունս ի Մեծն Հայս և մանաւանդ առ Ա֊անական վարպետս Համբաւեանն խնամատուեալք ի ժամանակին:

Իսկ Երեքեան Ա֊արդապետք քննեցին, ասէ նոյն Ա֊արդան, զդաւանութիւն առաքելոց սրբոց ի ձեռն աստուածամերձ վարդապետին Ա֊անականի, և գտին զայն համահաւ երեքին արանց փառաւորեալ Աթանասի, Գրիգորի Աստուածաբանի, Գրիգորի Նիւսացւոյն, Գրիգորի Լուսաւորչին և այլոց սրբոց:

Հայտնանեայցս Եկեղեցի, առ որս ասել ճոխ մեզ, չէ շեղեալ երբէք ի բանից սրբոց Հարց՝ ի հաւատոյս՝ որք հիմնեալք են ի վերայ Քրիստոսանին բանի, այլ խորշեալ է միշտ և խորշի ի նորադրաստեղծ և ի նորամոյծ բառից ինչ ի յետագային՝ ի վարդապետութիւնս հաւատոյ, որպէս ըստ ասել Հոգւոյն սրբոյ՝ և յորդւոյ. զոր և նա ինքն իսկ ոչ ուրանայ Ջամչեան. զի բովանդակ վկայութիւնս վարդապետաց Եկեղեցւոյ մերոյ, զորս յառաջ բերէ նա ի պատմագրութեան, գիրք գ, գլ Լ, ոչ երբէք գտանի բղխումն Հոգւոյն սրբոյ ասացեալ՝ և յորդւոյ, մանաւանդ ի Ա֊անականին բանս, որով Ջամչ ցուցանել զայս վարդապետութիւն. զի բղխումն և ելումն՝ ոչ նոյնանշան իմաստս ունին. Եկեղեցի

Հայոց և վարդապետք նորին ընդ սրբոյ Լուսաւորչին իբրոյ ըստ Փրկչին բանի առաքք Աւետարանին խնոտովանի, զՀոգին Ճշմարտութեան, որ ի Հօրէ ելանէ. Յովհ. գլ. Ժե. 26։ Եւ զի առնու յորոցէ՝ վկայի ևս անդ. յիմմէ անտի առնու. Ժ.Ջ. 14. խոստովանի նոյնպէս զՀամագոյակցութիւն Հոգւոյն սրբոյ ընդ Հօր և ընդ Որդւոյ՝ ըստ սրբոյ Լուսաւորչին, ,, Հայր յանձնէ, Որդի ի Հօրէ, և Հոգին սուրբ ի նոցունց էութենէ ,, ։

Ապա չին մեզ այլ վարդապետութիւն կարևոր ի դաւանութեան Հոգւոյն սրբոյ՝ աւելի քան զքարոզեալն մեզ ի սուրբ Եւետարանէն և ի մերոյ Լուսաւորչէն. ընդունայն և անհիմն պահանջմունք են պապից, և ընդվայր յեղյեղումն բերեալ՝ ի Յամէնայն, մինչդեռ նա անհատատարիմ գտանի այսպէս յիւրմէ իսկ յառաջ բերելոցն բանից սուրբ վարդապետաց մերոց, յորս ոչ գոյ բառդ, որպէս ասացաք։

ԳԼ. Խ.

Ոչըստըր Հոգով է Սէ՛ն վան Թոռպոպէ։

(Ընդ Տհառն 1292)։ — Յամին 1292 դիպեալ Ջառազատիկ՝ այն է խոտորումն աւուր ծնեան Ջատկին, յարեաւ խռովութիւն, վէճ և ազմուկ ի տեղիս տեղիս, մինչև ոմանց ի վեցն Ապրիլն ընդ Յոյնս կատարել զծոն, և բազմաց ըստ առաջնոյ տոմարին միով շաբթով յետոյ քան զՅոյնս. և առ այս երկաքանչիւր կողմանք մի-բաքանչիւր կարծիս պնդեալ, հակառակութեամբ ընդ միմեանս վիճէին։

Ջայս ամենայն կամեցեալ աղքայի Հիմոյ բառնալ ի Հոգովրդենէ և ի հոգևորականաց, կոչեալ առ ինքն ի Սիս զՊատրիարքոս Կաթուղիկոս ի Հռոմկլայէ, հրամայէ գումարել Հոգով Նպիսկոպոսաց և վարդապետաց ի քաղաք անդր։

Ապա ի Հոգովին յայնմիկ անաչառ քննեալ զուղիղ ժամանակ զատկի և ըզգուշաւոր հետազոտութեամբ ի վերայ հասեալ, յայնմ ամի ընդհանուր Սիրիկիա ծանէ զզատիկն ընդ Յունաց ի վեցն Ապրիլի. բայց ըստ պատմութեան Սիրիկիոյ՝ ընակիչք Մեծին Հայոց ի Պեսարիոյ ի վեր՝ ուրոյն ի Սիրիկեցւոց ըստ իւրեանց առաջնոյ սովորութեան ծանեցին յայնմ ամի զզատիկն միով շաբթով յետոյ քան զնոսա։

ԳԼ. ԽԱ.

Ե՞ւ ջԼն Հոգով է Սէ՛նէ, ո՞ւ Գրիգոր Կաթողիկոս Ընաւարզեցի յաղագս վանն անփոփոխ պահելոյ զծնեան Հայոց Նչխեցւոց։

(Ընդ Տհառն 1294)։ — Վարդապետք Երևելեան Նիկոմեդիոյ Հայոց լուեալ ըզյաջորդութիւն Գրիգորի Ընաւարզեցւոյ յաթոռն Հայրապետական, սկան խռովիլ ընդ այն, յարուցանելով տըրտունջ ընդ մէջ, զի գիտէին՝ եթէ նա հետամուտ է Հինից փոփոխութեան, նըմանելով այլոց ազգաց. ըստ որոյ և Հռոմն կոչէր մականուն նորա. զի ի յաջորդութեան Պօստանդեայ Ներկրորդի յամի 1287, յորժամ Լևոն արքայ Ջանայր հաւանեցուցանել զՀոգովն, զի ընտրեսցի նոյն ինքն Գրիգոր, հարք Հոգովոյն բովանդակ ընդդէմ կացեալ կամաց արքային, ոչ ընկալան զնա, զի Հռոմ է ա-

սէին, զառաջնորդութիւն այդպիսեակ ոչ կամիմք. որով և խափանեցաւ զառաջին ընտրութիւն նորա։

Ապա գահակալեալ ամին Գրիգորի յաթոռն Հայրապետական յամին 1294, յետ գերութեան Սահմանոյն Գ. ի Եգիպտոս, առ աւերանացն Հռովմկլայի, փոխեաց զԱթոռ կաթուղիկոսութեանն ի Սիս, ջանացաւ զայսօրիկ ծէսս մուծանել Եկեղեցի Հայոց ըստ Հաւատոյ և Յունաց եկեղեցեաց։

ա. Խառնել ջուր ի բաժակն, և յանելոլ ինչ ինչ ի սպաս պատարագի։

բ. Առնուլ զխաչեցեալն ի սրբասացութեանն։

գ. Հաւատոյ ասել ըստ աւուրց ամսոց։

դ. Պահել պահս հսկմանց ըստ Հատուածոյ, նոյնպէս և զայլ քանի մի պահս։

ե. Փոխել զբանս Մաշտոցին ի կանոնս մկրտութեան, դրոշմի, ձեռնադրութեան և այլոց օրհնութեանց։

զ. Միայն ի չորս եղանակս տարւոյն ըստ Հատուածոյ առնել ձեռնադրութիւն։

է. Փոխել ինչ ինչ ի ժամերգութեան յառաւօտու և յերեկոյի, և յաւելուլ ի նոսին պէսպէս կցուրդս այլոց ազգաց։

ը. Ի կիր առնուլ զիւղ երեխայից։

ը. Պատարել զկորհուրդ վերջին օծման հիւանդաց։

Եւ վասն այսոցիկ ամենայնի կատարմանց արարեալ էր նա զնոր ծնացոյց պահել ի ծածուկ առ իւր. զի սպասէր յաջող ժամանակի ի լոյս ածելոյ. բայց յայսմ ամենայնէ կանոնաց և ոչ մին ընկալեալ եղեւ ուրեք ոչ ի Սիլիկիա, և ոչ յարեւելս. միայն, զի վերջին օծումն ոմանց եղև ընդունելի. և ինքն ի ծխից, զորս կարէր, կատարէր ի ծածուկ. զորոց ոմանց վկայէ ինքնին, որպէս խառնել գջուր ի բաժակն. ևլն։

Տեղեկացեալ Ըռևելեան Վարդապետք ի լոյ, թէ Գրիգոր Կաթուղիկոս զայս ամենայն Հատուածս և զՅունադատեան փոփոխութիւնս յառաջադրեալ է մուծանել ի ծէսս եկեղեցւոյ Հայոց, կամ լաւ ևս, բառնալ զայնս. գժկամակ յոյժ ընդ նորաձևութիւն, արարին ժողով ի Սիւնիս յամի 1294. ուր և դրեալ թուղթս առ նա ինքն Գրիգոր, առաքեն բազմանուն առորադրութեամբ, զորոց զանուանս և զթղթոյն պատճէնս դնեմք աստանօր։

Սարգիս Արքիեպիսկոպոս առաջնորդ Նորավանից, Գրիգոր Արքիեպիսկոպոս Ստեփանէ, Յովհաննէս Արքիեպիսկոպոս Ջջնոյ, Յովհաննէս Արքիեպիսկոպոս Հաղբատայ, Գրիգոր Վարդապետ Ջջնեցի, Մարգար Վարդապետ եղբօրորդի Վանական վարդապետի, Հասան Վարժապետ՝ որոյ առաքելութիւն էր Յովհաննէս Վռանեցի, և Գաւիթ Վարդապետ Հայրարատայ, ընդ որս և Ստեփաննոս Ուռբելեան Արքիեպիսկոպոս Սիւնեաց, և եղբայր նորա Հերիկում իշխան, և Հօրեղբօրորդի նոցա Հայսպարիտ որդի Հասանայ և այլք ևս իշխանք։

Իսկ ի թղթոյ Ժողովոյն՝ կարևորան և եթ դնեմք աստանօր. յորում նախ յայտնեն Կաթուղիկոսին զիասկածանս իւրեանց յառաջադոյն ևս զնմանէ վասն ծխատիրութեան նորա, և համարեալ զայն, ասէ յեղաշեղումն կրօնից և աւանդութեանց, ազդեն նմա ի բաց կալ յայնօրինակ նորաձևութեանց. ապա այսպէս ուրեմն ա-

ւարտ տան բանից իւրեանց. ,,Գիտու-
թիւն լեցի աստուածային գլխոյ ՝այրա-
պետութեանդ, զի թէպէտ հնազանդ եմք
ամենայնիւ Տեառնդ մերոյ, սակայն աղա-
չեմք զնոտի կարծիս կրսեր և ոգեւ մտաց
մերոց բառնալ և բժշկել. զի տկարն յա-
մենայնի շահել պարտ է. և զոր խնդրեմք՝
հեննոփիկն թղթովք ձեռնագրել և առ-
նել ձեռնարկ հաստատուն և անկախ կը-
տակաւ՝ միաբանութեամբ սուրբ և եր-
ջանիկ եպիսկոպոսացդ, և ուղարկել առ
մեզ իբր զյետակար անջինջ, զի յայնժամ
առաւել հաստատութեամբ և հլու հը-
պատակութեամբ հնազանդ լեցուք աս-
տուածային գլխոյդ. և Թադաւորեսցես
յեկեղեցիս մեր՝ գահաւորեալ որպէս զա-
րեգակն. ապա թէ աւելի ինչ կամ պակաս
կամիք մուծանել յեկեղեցիս մեր, զոր ոչ
ունիմք ի հարցն, և կամ գրեալքս խո-
տան են առ ձեզ, յայնժամ մի՛ աշխատ
լինիք, և մի՛ զմեզ աշխատ առնէք. ըստ
ձեր կամաց լեցի աշխարհդ այդ, և այլ զո
որ կամիցի, և զմեզ թողէք ի մեր գիտու-
թիւնս. և մեք կացցուք միաբանք՝ ակ-
նունելով վերին այցելութեանն: Ողջ
լեր Թադաւորական արգասիքդ ծնողդ
իմաստից, և անվախ ախոյեանդ սուրբ եկե-
ղեցւոյ Գրիգորիոս կաթուղիկոս ՝այոց,
և Տէրն տերանց հովանասցի ի վերայ գըլ-
խոյդ,,:

Գ.Լ. ԽԲ.

՝Ինգերդորդ Յովհ. ի Սիւ վառն հաւատոյ և Ձեռնց:

(Ամք Տեառն 1307) : — ՝Ինգերդորդ
Յովհաննէս Սոյ հղև յետ մահուան Գրի-
գորի Ընտաւարղեցւոյ հրամանաւ Լևոնի
արքայի և ՝Երեմիայ Թադաւորահօր. վասն
զի նախ ժողովով ընտրեսցի նոր կաթու-
ղիկոս և ապա ընկալցին և հաստատեսցին
զկանոնս ծիսափոխութեան Գրիգորի զա-
րարեալն ի կենդանութեան իւրում. զոր
նա ցանկայր առ իւրով ժամանակօք հաս-
տատել ի ձեռն Յողովոյ յեկեղեցիս ՝ա-
յաստանեայց. զորոյ և զհանգամանս նախ
առաջի դիցուք, որպէս և յիշատակեցաւ
ի վեր անդր:

Գրիգոր Ընտաւարղեցի յառաջագոյն
պատրաստեալ զվոխոխութիւն ծիսից,
զոր վաղուց ի մտի եդեալն էր, այն ինչ
խաղաղանայր աշխարհ Կիլիկիոյ, ապա
առ ի հաւանեցուցանել ընդ այն զա-
րևելեան եպիսկոպոսունս, ժամ պատեհ
վարկուցեալ գրէ առ ամենասին նոսա
Թուղթս՝ առաջի առնելով նոցին զխոր-
հուրդ իւր. որոց երևելիքն են Յովհան-
նէս Որբել Երքեպիսկոպոս Սիւնեաց, որ
պայազատէր և զմարմնաւոր իշխանու-
թիւն աշխարհին. Օշաքարիա Տօրծո-
րեցի Երքեպիսկոպոս Ուռհայու և առաջ-
նորդ Թադէոսի վանից. Յովհան վար-
դապետ Տօրծորեցի՝ այն է Ընդկայի.
Յովհաննէս Երքեպիսկոպոս Ըջնոյ և ա-
ւագունն:

Ապա իբրև յարեաւ հակառակութիւն
ընդ միջ Յովհաննու Որբելի և Օշաք-
րիայ Տօրծորեցւոյ ընդ բանս Թղթոց կա-
թուղիկոսին յարևելս, որք և հանդամա-
նօք իսկ հասին ի լուր ինքեան Գրիգորի,
ևս և յայլ և այլ կողմանց այլ և այլ զոյց
ընդ բանս Թղթոց նորա յաղագս փոխո-
խութեան ծիսից, կասկածեալ, եթէ խա-
փանեսցի գուցէ խորհուրդ իւր, զոր ան-

կայր հաստատել Յովղովք ի կողմն իւրու-նելով զ[illegible]ան արքայ. բայց զի ոչ ինչ իշխեր առնել թագաւորն առանց հրա-մանի թագաւորահօրն Հեթմոյ, նորին ա-զգաւ ապա Գրիգոր Կաթուղիկոս գրեաց յաղագս փոփոխութեան ծխոյ և Յովղով առնելոյ սահմամբ առ Հեթում թուղթ յորդորանաց խնդրեալ ի նմանէ՝ Յովղով լինել և զարժանի փոփոխութիւն ծխոյ ընդունել և համաձայնիլ այլոց ևկեղե-ցեաց· ըստ որոյ և ինքն պատրաստէր զգ-նամակ դաւանութեան, նշանակելով ի նմին զինն գլուխս բանից, զորս ցանկայր Յովղովք հաստատել, ապաստելով պա-տասխանւոյ առ ի Հեթմոյ։

Այլ մինչ չև ընկալեալ էր Գրիգորի զգ-կատարումն փափագանաց իւրոց՝ հասեալ նմա վաղճան, փոխեցաւ յաստեաց յամի 1306· զորոյ զմահուանէն Ղազար Կա-թուղիկոս Ջահկեցի ի գլուխս Յովղովց այսպէս վկայէ, համարելով աստուածա-հաս պատուհաս. ‘‘Վանդէ, ասէ, Գրի-գոր Ընաւարզեցի յաւուր միում մինչ նստեալ ի վերայ աթոռոյն իւրոյ հայհոյեր զառաջին սուրբ Հայրապետս մեր, նոյն-ժամայն յանկարծակի անկեալ յաթոռոյն դիւահարեցաւ, և բազում աւուրս լկեալ ի դիւաց, յանկարծակի դառն մահուամբ վճարեաց զկեանս իւր,,։

Եպա ի հրամանէ արքայի և թագաւո-րահօր՝ որպէս յիշեցաք ի վերոյ՝ գումար-եալք ի Յովղովէ ի Սիս, քառասուն և մի Եպիսկոպոսք, որոց անուանք մի առ մի գրեալք են յընդարձակ պատմագրու-թեան Ջամչեանի, տասն վարդապետք, և հօթն վանահարք, քահանայք և երէց-ք սրբոյն պալատանն և այլք, և կրօնաւորք ոչ սակաւք, և արքայ և Հեթում և պա-տգայք և պալատականք նոցին, ընդ որս և իշխանք աշխարհին և պարոնայք, ըն-թերցան զնամակ դաւանութեան Գրի-գորի և ընկալան զինն գլուխս բանս փոփո-խութեան ծխոյ բովանդակեալսն ի դա-ւանութեան, որ դէպ ի ստորև, և ստո-րագրեցին այնմ նամակի հարք Յովղովցն յանձնառութեամբ ամենայնի այնոցիկ։

Յետ որոյ հաւանութեամբ բովանդակ Յովղովցն կոչեցաւ վերստին յաթոռ Հայ-րապետութեան Կոստանդին Կեսարացի՝ ընկերացեալ յաթոռոյ ի Հեթմոյ Ն. ար-քայէ, վեհանակ Գրիգորի։

Կանոն փառաւորեան ընդդէմ գրէից

ա. Խոստովանիլ ի մի անձն Քրիստոսի բացայայտ բառիւք զերկուս բնութիւնս և զերկուս կամս և զերկուս ներգործութիւ-նըս՝ զաստուածային և զմարդկային։

բ. Յերկնաբրբասացութեան յաւելուլ զբառդ Քրիստոս, և ասել, Սո՛ւրբ Աս-տո՛ւած, սո՛ւրբ և հզօր, սո՛ւրբ և անմահ Քրիստո՛ս, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ։

գ. Տօնել զծնունդ Տեառն Յիսուսի Քրիստոսի ի Դեկտեմ. 25, ըստ Յունաց և ըստ Լատինացւոց· ըստ այսմ և զայլ տօնս, որք ի նոյն հային՝ ըստ պատշաճի աւուրց տոյ· նոյնպէս և զայլ ամենայն տօնս ըստ Ասմատուրաց կատարել։

դ. Պահել զաւուրս հինգ վասն տօնի Յիսուսի Քրիստոսի, և զաւուրս հինգ վասն տօնի Յայտնութեան Քրիստոսի։

ե. Ի ձրագալոյցն Յիսուսեան, և Յայտ-նութեան և Յարութեան՝ ձկամբ և ձի-թով միայն լուծանել։

Ը. Ի պաշտաման պատարագի զգենուլ զսուրբ զգեստս ըստ իւրաքանչիւր աստիճանի կարգին:

Թ. Ի սեղան խորհրդոյն դնել զԱօրիուրբայ կամ մարմնական:

Ժ. Ի խորհուրդ պատարագին արկանել ջուր ի բաժակն:

ԺԱ. Ընդունել զեօթն ընդհանուր ժողովն և զնահմանադրութիւնս նոցա:

ԳԼ. ԽԳ.

Վ ԷՅԵՐՈՒԹ ԺՈՂՈՎ Է ԱԿՈ ՎԱՆ ՎԵՐԱՊԻՆ ԴՆԵԼՈՅ ԿԱՆՈՆԱ ԺՈՂՈՎՈՅ ՆՈՑԻՆ:

(Ամք Տեառն 1309):—Յետ սրախողխողելոյ Լևոնի և Թագաւորահօրն Հեթումայ ի Պնդղար իշխանէն Թաթարաց ՅԸնարզաբայ քաղաք ընդ այլ իշխանս Հայոց երևելեաց յաղագս ատելութեանցն ի վերայ փոխոխութեանց ծխոյ Հայաստանեայց եկեղեցւոյ ըստ մատնութեանց ոմանց իշխանաց մերոց, գահակալեալ յաթոռ Թադաւորութեան Օշնի եղբօր Հեթումայ Ռ.ոյն, հրաման առ ամենայն Ընաջնորդս հանել կատարել անխափան ըղկանոնն ԺողովոյնՍսոյ զարարեալսն յԸնաւարտեցոյն:

Ընդ այս հրաման արքայի ոչ հաճեալ երբէք արևելեան Եպիսկոպոսաց Հայոց, և արևմտեայց ամբոխեալ առհասարակ վանահարց և ժողովրդոց, յարուցին յերին յամենայն տեղիս խռովութիւն մեծ, մինչեւ յեկեղեցիս, ի փողոցս և ի հրապարակս և ի վանորայս բողոք բառնալ և ոչ ընդունել կանոնին մանաւանդ զօծոնն և զպահն և զխառնուածն ջրոյ ի բաժակն և զայլայլութիւն Սուրբ Ընծայիցն:

Եպա Օշնի ի խաղաղել զայս ամենայն, պատգամ յղեալ առ նոսա խոստանալով ըստ կամաց նոցին առնել, դնալ ի Հողմանս Լաղիշոյ և հրամայէ ժողով լինել անդ եպիսկոպոսաց և վարդապետաց, զի քննեսցեն զկանոնս և որոշեսցեն՝ զինչ արժանն է առնել:

Եկայք Եպիսկոպոսք և վարդապետք ամենեքեան՝ առ որս հրաման ելհաս արքունի ի վերայ բանիս այսորիկ, հրաժեշտ տուեալ ընդ կոչումն, դիմեն ի Սիս և անդ ժողով արարեալ միանգամայն մերժին զպարծս ժողովոյն Սսոյ ի հինգերորդ նուագի և հերքեն զկանոնս ծխատիրութեան, բարձեալ միանգամայն զաղմուկ և զխռովութիւն. ուր հասեալ և մեծ բազմութիւն քահանայից, սարկաւագաց, կրօնաւորաց և միանձանց և անհամար ժողովրդոց՝ արանց և կանանց, բողոք բառնային ընդ ծխատիրութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ:

Թէև Հարք ժողովոյս հուսկ ապա կրեն զմեծամեծ հարուած ի բարկութենէ արքային, ոմանք զբանտարկութիւն, ոմանք զաքսորանս և բազումք ի ժողովրդոց ըզմահ ևս, բայց այսու ամենայնիւ ոչ ոք ի նոցանէ ընդ կամս արքային հաճեալ պահեն զկանոնս ժողովոյն, այլ միայն անխափան կանոնքն կատարեցան յարքունիս և ի կաթուղիկոսարանի: Օրի ի վարել ուրուք այսոքիւկ կանոնովք ի ժողովուրդս, նորանոր չարիք երևէին, որպէս տեսանի ի պատմութեան Միխիթիայ:

ԳԼ. ԽԴ.

Ընտրին Յովսէփ յԱրտանայ վանն Ձիակց և հաստատի։

(Ամք Տեառն 1316)։—Տեսեալ Օշնի եթէ բռնանալով ի վերայ եպիսկոպոսաց և առաջնորդաց աշխարհին՝ ոչ երբէք ածէ զազգն և զեկեղեցին յընդունելութիւն ծիսից և վարուց հոնոնցն, այլ յաւէտ երկպառակութիւն, և մահ և օձտուքն ի միմեանց յառաջանայ ազգին, մանաւանդ թէ և Գրիգոր Եպիսկոպոս Արծնոյ սպանաւ վասն խառնելոյ նորա զջուր ի բաժակն, և թէ Սալահ Եպիսկոպոս Երուսաղէմի առ ոտն արկեալ զՀրաման իւր և Պօտանդեայ Նաթուղիկոսի, հրամանաւ ամիրային Եգիպտոսի նստաւ յԵրուսաղէմ, և ընդվզեալ ի կաթուղիկոսական իշխանութենէ, ինքնագլուխ վարէր զիշխանութիւն, յորոց դեսպանս առ Աղեմէս պապն Հռոմայ վասն գժտութեան ընդ մէջ իւր և արքային Կիպրոսի, և վասն Հրամանի խնդրելոյ ի նմանէ պահել ի պալատան իւրում զվեց Լատին կրօնաւորս ի վանացն Կիպրոսի. առ որ և պապն գրեալ Հրամանն տայ պահել ըստ ցանկութեան իւրում զկրօնաւորսն ի պալատան իւր։

Ընդ այս խրախուսեալ արքայի առնու ի ձեռն զարձեալ զտիպուքն առաջնորդաց՝ վասն անխափան պահելոյ զկանոնան. և իբրև ոչ կարաց առնել ինչ ըստ առաջնութեան, յարուցանէ հալածուքն մեծ ի վերայ նոցա. ընդ որ և հուսկ ուրեմն անձաբայեալ, վերստին Յովով արար հրամանաւ իւրով յԱտանայ քաղաքի ի տաճար սրբոյն Մինասայ յամի 1316, ի ներկայութեան իւր և բոլոր պալատակացն և մեծամեծ իշխանաց և նախարարաց տէրութեան իւրոյ։

Յայս հրաման արքունի բազումք դիմաբացեալք, ոչ իսկ ելին ի ժողովն. իսկ որ սակաւք յեպիսկոպոսաց գտան անդ, էին անձինք ևթնեւտասան, որք հնազանդեալք հրամանին՝ ընթերցան զսահմանադրութիւն ժողովոյն և զինն կանոնս պատրիկ, և զնամակ դաւանութեան Գրիգորի, ընկալան զարձեալ և հաստատեցին զայն սաորագրութեամբք ամենեցունն։

Բայց այսոքիկ սահմանադրութիւնք և ինն կանոնք թէև երկիցս հաստատեցան, թէև ընկալաւ ի ժողովն, այլ նոքին իսկ հարք ժողովոյն առաջնոյն և վերջնոյս՝ երբէք չկատարեցան կատարել յեկեղեցիս առ ահի ժողովրդոյն. զոր որոյ երևի թէ բռնութեամբ իշխանութեան ընկէին ժողովքն։

ԳԼ. ԽԵ.

Եօթներորդ ժողով է Սիս վասն պատասխանելոյ նամակի Պապին։

(Ամք Տեառն 1342)։ — Յառաջնում ամի Հայրապետութեան Մխիթարայ Գոնեցւոյ, ներսէս Եպիսկոպոս Որմեայ տեսեալ զանձն ի կարգս Ընկերութեացն եկն առ նա, որ հալածանս կրեալն էր յազգէն ցայն վայր յաւուրս Յակոբայ Սսեցւոյ. այլ իբրև և ի Մխիթարայ յանդիմանեցան գործք նորա իբրև արհամարհող օրինաց, դարձաւ զնաց առ Լեւոնէ իկոս Պապն Հռոմայ, և յԱւենիոն քաղաք, և յարեալ անդ յոմանս յազգէ Հայոց՝ որք ի կարգէ Ընկերութեացն էին, և յին-

քեանս յանկուցեալ զ՝ատենս ոմանս փորձառուս Երեմեան իրաց ըստ իւրեանց վիայութեանն, մատուցին պապին զչքնաքսութիւն ծանր զ՝այդ Սիլիկիոյ և արեւելեայց, չանացեալ ցուցանել՝ թէ լի են՝այք ամենայն մոլորութեամբք. զորպիսի ամբաստանութիւն գրեալն էր յառաջագոյն առ պապն և դոլծակից Ներսիսի Սիմէոնէ բէկ եպիսկոպոս Նարեկոյ՝ հալածեալն ի Սիսեցոց՝այոց։

Ուր և ամենեքեան նոքա առաջնորդութեամբ Ներսիսի զամենայն ինքնահնար ամբաստանութիւնս զ՝այդ ժողովեալ ի մի գիրք, կցկցեն ի վերայ և կեղեցուցն՝այդ զհարիւր տասն և հօթն մոլորութիւնս հաստատեալ բանիւք ոմանց հակառակասիրաց, և մատուցանեն պապին, յօդելով՝ թէ՝այք լի են այսպիսի մոլար վարդապետութեամբք։

Օգայս ամենայն ընթերցեալ և լուեալ պապին, կամեցեալ ստուգել զամբաստանութիւնսն, առաքէ ապա զպատճէն գրոյն մոլորութեանց առ Լեւոն արքայ և առ Մխիթար կաթուղիկոս, և ինքդրեաց և նա, զի Յովովէ հերքեսցեն զայն ամենայն, և ցուցցեն զուղղափառութիւնս եկեղեցւոյն՝այոց։ Իսկ արքայն ծանրացաւսաւ եղեալ ընդ դրպարտութիւնսն և ընդ գիրս մոլորութեանն՝ հրամայեաց ուրուն Դանիէլ վարդապետի պատասխանի գրել առ պապն ընդդէմ գրոցն. ըստ որոյ և նա ինքն շարադրեալ գրիչք մի, սակ զամենայն ամբաստանութիւնս հակառակողացն. և հրամայէ և արքայ Յովովէ դուռմարել և հերքել զմոլորութիւնսն։

Եւ զայս Յովովէ առնէ Մխիթար կաթուղիկոս յետ վախճանի արքային և յաջորդութեան ի թագաւորութեանն Կոստանդնի պայ կոչեցելոյ յամի 1342, ի Սիս, ուրանօր գումարեալք քան և զինն եպիսկոպոսք յայլ և այլ կողմանց աշխարհին՝այոց, հինգ գլխաւոր վարդապետք, ոմանն վանահարք, և բազում աւագերիցունք հանդերձ քահանայիւք իւրեանց, և յաւուրն հանեալ զդիրս մոլորութեանցն և հերքեալ մի առ մի, գրեն պատասխանի ընդարձակ յոյժ, ցուցեալ՝ թէ այնքիկ ամենեքեան շաղփաղփութիւնք զառածեալ մատց, և քառս արանց ամբաստանութիւնք են և ոչ ուղղափառ ազգի գաւանութիւն. և առաքեն առ պապն վերադրող պապ յաջորդեալն Ղեւոնդիոսի՝ առաքաղրութեամբ վիրաւոր Յովովէի։

Եւ թէ որպիսի՞ էին ամբաստանութիւնքն և պատասխանիք Յովովէի, ոչ ամենայնն իմ վայր գոյ. և զի իւրաքանչիւրն՝այոց և եղեալ են կարևորքն և եթ, նորին ազգակից Թորոս իւրայոյր յաղագս Յովովէի Կաղկեդոնի գրեն այսպէս. «Յովովէն Կաղկեդոնի վասն այնորիկ մերժեցին ոմանք ի՝այոց, զի յոմանց վատ արանց և ի տուտ բանից զնուռվութիւն սերմանողաց յեկեղեցի՛ յորոց խորշէ՝այոցն սուրբ, չարաչար հարբաւեցաւ ի՝այոց։

Գլ. Խգ.

Ո՞րպէս Յովովէ ի Սիս վառն վաճառելոյ պղծութ ասուրբ ընծային։

(Ամք Տեառն 1361)։—Յաւուրց անտի հինգերորդ Յովովէին Սսոյ և Ամա-

նայ մուծեալ յեկեղեցիս Հայոց ուրիք ուրիք ի Մեծն Հայս և յընդհանուր գըլխէ Ալիլկիայ սահմանադրութիւն խաո նելոյ զջուր ի սուրբ բաժակն, բազում վէճք և տարակոյս յայն սահմանան յառնէին, յաւէտ ևս խռովութիւնն բորբոքեալ ի վանօրայս, յերիցունս և ի ժողովուրդս, սրօք և բրօք գրիթէ պատահէին միմեանց և ոձիրս բազումս գործէին. զի ոմանք պնդէին թէ՝ պարտ է խառնել զջուր ի բաժակն, և այլք թէ՝ պարտ է զանապակն պահել ըստ առաջին սովորութեանն:

Ապա Մեսրովբ Հայրապետ յԵրուսաղ գաւառէ, որ յաջորդեալ յԱթոռն էր Հոս Յակոբոյ Սեբեդեայ, ջանացեալ խաղաղել զնոսին, առնէ Ժողով եպիսկոպոսաց և վարդապետաց աշխարհին Ալիլկիոյ ի Սիս. և յետ բազում խորհրդոց և բանից ընդ մէջ մտելոց՝ հրամայէ ամենեցուն միօրինակ վարիլ ըստ առաջնոյ սովորութեանն, այն ինքն անապակ դինեաւ կատարել զխորհուրդ պատարագին. որով և բարձաւ յայնմհետէ և յապա գործածութիւն խառնելոյ զջուր ի բաժակն, ամենայն ուրիք, նա և յաշխարհին իսկ Ալիլկիոյ:

(Շարունակելի)

ԱՐԻՒ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ:

ՀԱՑԱՍՏԱՆԵԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԱՆՑԵԱԼՆ

(Շարունակութիւն):

Սուրբն Սահակ Պարթև և երանելին Մեսրովբ - Մաշտոց՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ շարունակութեան և պայծառութեան մէջ սեռնուած փառաւոր և սքանչելի արդիանց և սխրագործութեանց նկատմամբ՝ զկնի Ս. Գրիգոր Պարթև երկրորդ լուսաւորչի՝ Հայոց եկեղեցւոյ՝ Ընդի և Հայութեան մեծարդիւն՝ բազմերախտ և անմահ բարերարներ կհանդիսանան, — որոց բազմավաստակ քրտանց վսեմ արգասիքներն՝ անհամեմատ իմն առաւելութեամբք հիւսուած կպանծան և կծածանին Հայութեան գարաւոր դրօշակին վերայ՝ ամեն վտանգներէ և մեքենայութիւններէ զերծ և ապահով պահելով՝ և ցյաւիտեանս անվթար և անջինջ փայլեցնելոյ ուխտը աւանդելով սամեն հառնդուն և հարազատ Հայկազանց:

Ապաքէն մինչև ցսուրբն Սահակ Պարթև Կաթուղիկոս՝ սկսեալ ի Ս. Գրիգոր Պարթևէ՝ ըստ բազում մասանց՝ Հայաստանեայց եկեղեցւոյ պայծառութիւնը օր քան զօր փառաւորուեցաւ և Քրիստոնէական կրօնի ուսումը զարգացաւ, սակայն առանց խորամուխ հասատատելոյ մի երաշխաւորեալ զօրաւոր միջոցի կատարելութեան մէջ՝ վտանգ կսպառնայր երբեմն անիշխանութեան մատնուելով՝ ամեն կարգադրութեանց, բարեկարգութեանց, բարենպատակ համայն ջանից և նոյն իսկ կրօնի ուսման հիմնայատակ սատպակելոյն կամ մոգակրօնութեան մէջ՝ և կամ օր և իցէ մի հզօր և բազմակուռ օտար ազգի բռնութեանց և որոգայթից մէջ, զոր ժամանակակից ինչ ինչ քաղաքական և կրօնական անցքեր ևս կհաստատէին:

Ահա ամենի երևելի-ագեալ ղեկա-ոչ ՀԼՈՅՆ էր Ընդհայն հաբապատ վեղե-է և հաստենադրութեան պատճառը և Հայկա-

կան պատկեր ընդ-ընական լրոմբ, որոյ համար՝ իրաւ որ մեծ կարօտութիւն հետզհետէ զգալի եղած՝ և Ազգանուէր բարերարաց և Եկեղեցւոյ Հայրապետաց խորին ուշադրութիւնը գրաւած էր, և ահա գայս ի գլուխ տարաւ Սուրբն Մեսրովբ-Մաշտոց, և Սահակ Պարթև Կաթուղիկոսի հետ աջակցած՝ փառաւորապէս պըսակեցին Հայ. Եկեղեցւոյ և Ազգի գոյութեան երաշխաւորութիւնը և յաւիտենական հաստատութիւնը։

Ըստ որում ունենալ յատուկ մայրենի լեզու, իսկ չունենալ յատուկ գիր և գրականութիւն, ոչ ինչ նշանակութիւն ունի (առանց երկոցունց զուգակից գոյութեանց), և այս ոչ մի ազգի ինքնուրոյնութեան և յատկութեանց օգուտ և երաշխաւորութիւն կարող չէ ընձեռել և ապահովել։ Ո՛չ այսպէս էր Հայոց եկեղեցւոյ և ազգի վիճակ մինչև Հայկական գրոց թերութեանց կատարելագործութիւնը ի ձեռն Ս. Մեսրովբի, որով՝ թէպէտ ընդհանրապէս մայրենի (Հայ.) լեզուն կըտիրեր ի Հայս, սակայն դիւանական գրագրութեանց մէջ գրեթէ Պարթևական գրերն, իսկ կրօնականին մէջ Յունական և Ասորական գրեր կգործածուէին, և որով հետև ազգային-քաղաքական իշխանութեան բազմաժամանակեայ ակարութիւն գրացի հզօր ազգաց և տէրութեանց ազդեցութեանց և մեքենայութեանց ներքև ձնշուած, միանգամայն տեղի տուած էր ի տեղիս տեղիս Պարսկական, և յայլս մանաւանդ ի կրօնականս և յեկեղեցականս Յունական և Ասորական գրոց ընդհանրանալ յաճախելոյն և գործածական լինելոյն, ուստի թէ ժողովրդեան՝ թէ Եկեղեցւոյ պաշտօնէից և թէ Ազգային վարժարանաց և Հայ մանկտւոյն ազգային և կրօնական դաստիարակութեան քանի՛ մեծ դժուարութիւնք կընդառաջէին, և որքան ծանր՝ տաժանակիր և անտանելի տառապանք կը ծագէին կրօնական գրեանց և եկեղեցականց երգեցողութեանց համար։ Թողումք զայն՝ զի թէպէտ մեր սեպհական գրերէն աւելի կատարելագործեալ լինելով՝ մեր լեզուն օտար գրոց ստորադրելը այնքան նշանաւոր դժուարութիւնք չունէին, սակայն և այնպէս՝ բաւական կակարանային թէ Պարսկականն, թէ Յունականն և թէ Ասորականն՝ մեր Հայկական լեզուի ճիշդ հնչմունքը պարունակելու և յայտնելու։ Թողումք և զայն՝ զի հետզհետէ մեր լեզուն ևս՝ օտար ազգաց գրոց ընդհանրանալոյն հետ՝ օտար ազգաց լեզուներէն նուազ կարևորութիւն ստանալոյ վտանգին ենթարկուելոյ սկսած էր՝ կրօնական ուսմանց ևն. անհրաժեշտ հարկին իբրև աւելի հզօր հետևանք լինելով։

Իսկ երբ Ս. Սահակ Պարթևի անխոնջ ջանքեր, և յատկապէս երանելւոյն Մեսրովբայ ոգևից առանդեան և յաւիտենական անհանգիստ աքնութիւնք և ճիգեր յաջողեցան Հայկական գրոց թերութիւնքը իբրև յԱստուածաստ ընդունելով՝ կատարելագործ լրացուցանել, առ ամեն վտանգներու մօտալուտ հետքը միանգամ ընդ միշտ ջնջուեցան, Հայութիւնը հզօր յաղթանակ կանգնեց, Հայոց մայրենի լեզուն յաւիտենական փառաւորութեան մէջ պսակեցաւ, Քրիստոնէական ուսումն և այլ արտաքին գիտութիւնք ծաղկեցան և սիրուեցան աւելի արդիւնաւոր և արագընթաց քայլե-

լով, Հայաստ. Եկեղեցին և իւր Պրիս-
տոսաւանդ վարդապետութիւնք և որ-
դիւնքներ յարատև և խորարմատ հաս-
տատութեամբք ապահովուեցան և ի-
բաշխատարուեցան ազգային վարժարանաց
հետ ի միասին: Ուսոի Հինգերորդ դարը
Հայաստանեայց ՈՍԿԵԴԱՐ դրոշմուեցաւ,
որ և Հայկական գարուբերանց ամենանը-
շանաւոր ժամանակ և դարձգլուխն է:

Վասն որի Հայաստանեայց Եկեղեցւոյ
յիշեալ երկու քաջ Հայրապետներ՝ Ազգային
թագաւորական իշխանութեան դեկավար
ուսումնասէր Վռամշապուհ թագաւորի
թէ նիւթական և թէ բարոյական աջակ-
ցութիւնքը գրաւած՝ և եկեղեցական
նուիրապետութեան ամենակերպ ազդե-
ցութեամբ և գերիշխանութեամբ կուռ
վարուած և հոգևոր մշակաց պարապմունք
կանգնած՝ այլ և այլ բարեկարգութիւնքը
յաւելցուցած և զեկեղեցին պայծառա-
ցուցած ժամանակ՝ վերին Նախախնամու-
թիան այսպիսի այցելութիան ի շնոր-
հըս առաւել քան զառաւելն ոգևորուե-
ցան, իւրեանց բոլոր ուժը տուին Հայ-
կական գրոց ուսումը ընդհանրացնելոյ:
Անմիջապէս՝ ասանց խոչընդոտի՝ հոգևո-
րական և աշխարհական ազնիւ և ազնուածին
անձինք ընտրեցին՝ և ի Հայրենական
նահանգ երեւելի անուանդ ղրկեցուցած և հըր-
ամայած պետերք փոխանցոցին քաղաքա-
ւորեալ գոյացեալ և հրահանգ տուին՝ ոչ
միայն տեղական լեզուները և գանուած
դիտութիւնքը քաջ ուսանելոյ, այլ և՝
որքան ձեռնհաս կլինէին՝ բազում կրօնա-
կան, եկեղեցական, պատմական և ուսում-
նական գրեանք ի Հայերէն բարբառ և ի
դիր թարգմանելոյ և հետները բերելոյ
համար: Ընդ ձանձ և ընհանուր ի գործ
դրին ընդ ամենայն պեղեր ի Հայս դպրոցս
ընդ բազմապատկելոյ ԱՆԸՆԴՀԱՏԻԶԱԿԱՆ
ԻՇԽԱՆՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՄԲ,
Հայրենի լեզուն և գրականութիւնը ըստ ար-
ժանոյն ասանդեցին ազգային հանդիսոյն և
պարտիեցին, իբրև կրօնական, բարոյական և այլ
կարևոր գիտութեանց ճոխ աղբիւր ցանեցին
Հայրերոյն հատց անդաստանաց մէջ և քաղբ
քաղբ եղևուվ դալեցին, և Ազգային դաստիա-
րակութիւնը նորէրեցին: Ասատուածա-
շունչ Գիրքը թարգմանեցին ի Հայ, ե-
կեղեցական գրականքը նոյնպէս, և երգեցո-
ղութիւնքը ի Հայերի դիր տարածեցին: Ի
Հայ բարբառ թարգմանեցին և թարգ-
մանել տուին և այլ բազում կարևոր գըր-
ևանք, որոց համար ընդարձակ տեղեկու-
թիւնքը կհաղորդին մեր պատմագրու-
թիւնք և մատենագրութիւնք: Վերջա-
պէս սոցա քրտնավաստակ ջանից արդիւնք
եղան և այն ամեն բարեկարգութիւնք և
թարգմանութիւնք, զորս աշակերտքն բե-
բերին այլ աշխարհներէն և սփռեցին ի Հայս
և գործադրեցին Հայ. Եկեղեցւոյ պայ-
ծառութեան և փառաւորութեան, և
Ազգի մտաւոր և բարոյական զարգացման
և յառաջադիմութեան համար:

Իմ նպատակ մի համառօտ տեսութիւն
լինելով, իսկ եկեղեցական պատմութիւնք՝
ինչպէս նաև ազգային պատմութիւնք՝ ըն-
դարձակ ուսանդած գոլով սրբոյն Սահա-
կայ և Մեսրոպեայ կենսագրութիւնքը և
սխրագործութիւնքը, չհիշեմ սոյն երա-
նելեաց ամեն գործերը մի ըստ միոջէ. չի-
շեմ սոցա ճանապարհորդութիւնքը և
քարոզութիւնքը այլ և այլ տեղեր Ազգի
վերկութեան և պահպանութեան, և եկե-

ղեցւոյ պայծառութեան համար։ Չիշեմ սոցա կրած տառապանքները, հալածուածները, և վիշտերը։ Չիշեմ պղտզի և պղակրօն կամ պղտգաւան տէրութեանց և թագաւորաց դիմելով՝ նոցա իշխանութեանց ներքև եղած Հայոց համար թափած արտասուքները, աղերսարկու միջնորդութիւնքը, և ի գուժ շարժելով՝ Հայոց Եկեղեցւոյ և ազգութեան ազատութիւնը խնդրել և սահմանները, և նոցա իշխանութենանց ներքև եղած Հայոց և Ազգ. վարժարանաց և մայրենի լեզուի և կրօնի դաստիարակութեան ընդ դէմ ի գործ դրուած բռնութիւնքը և բռնաբարութիւնքը վերցնել տալով՝ ազատաբար իւրեանց ջանքերը և իրաւասութիւնքը նոցա բաժնից մէջ գտնուած Հայոց վերայ ևս առատաբաշխ տարածեները։ Չիշեմ թագաւորական տան և Ազգի ենթարկուած վտանգից համար Ս. Մահակ Պարթևին ի պարսս դիմելով ի գործ դրած քաջութիւնքը և սիրտգործութիւնքը՝ մինչև այն աստիճան՝ զի թագաւորներ և նախարարներ յատուկ կը կրթուէին, կրած բանտարգելութիւնը և նախատինքները այնքան՝ զի Հայրապետական անբռնաբարելի գահէն զրկուելով և երբեմն տարաժերժուելով՝ մերթ լոկ կրօնական գործոց համար Կաթուղիկոսական իշխանութեան ազատութեամբ կաշկանդուիլը։ Չիշեմ նոյն իսկ իւր հոգևոր երկանց որդիներէն ընդունած վերքերը, մինչև Նոյնպիսի վըշտաց մէջ՝ և խորին ծերութեան հասած՝ կնքեց իւր բազմարդիւն և խնկելի կեանքը գրեթէ լինտամեայ հասակին մէջ, չնայելով որ՝ յետոյ նախարարք ստրջացած՝ թախանձանօք հրաւիրեցին ի Հայրապետական նուիրական գահն, բայց սուրբն Մահակ յանձն չառաւ՝ և ասաց, ‘‘Քա՛ Հանայանալ ի վերայ տիրանենդ ժողովրդոց ոչ կարեմ,,։ Ես այսպէս կնքեց իւր բազմարդիւն կեանքը՝ երբեմն նախագուշակելով նա և Ազգի և Եկեղեցւոյ ապագայ վիճակը, և սլացաւ յերկինս ի յաւիտենականութիւն։

Գրեթէ նորա առ Աստուած փոխուելէն վեց ամիս ղկնի՝ մինչ կաթողակալեր, Ս. Մեսրովբ*) երանելին և կվերափոխի Ընդբանկաց խորանը՝ բազմարդիւն կենաց անդին յիշատակներ աւանդելով Հայոց։

Երդ քանի և որքան նուիրական պէտք էլինին յիշեալ երանելեաց անուանք Հայաստանեայց Եկեղեցւոյ հարազատ որդւոց սրտից մէջ՝ ըստ մեծարդիւն և բազմերախտ սիրագործութեանցն, և թէ որքան մեծ նշանակութիւն ունին այն գործառնից արդիւնքներ մեր Եկեղեցւոյ և Ազգի համար, կրնդունէ բանիմաց և ըզգայուն սրտից՝ ինքնին մակաբերել։

Երդարև կարժէ որ սոցա անուանք Հայէա ոսկի տառերով դրոշմուին Հայաստանեայց Եկեղեցւոյ և Ազգի պատմութեանց մէջ, և սոցա վաւելուն և պղպանուէր ջանքերն և յիշատակներն պէտք է՝ ղի ի բարի նախանձ դրդեն և վառեն Հայոց սրտերը։

— Ընշուշտ ամեն Հայ գիտէ՝ զի Հայկան լեզուի՝ գրականութեան և դպրու-

(*) Ափսո՜ որ Ս. Մեսրոբայ այսքան երախտեաց փոխարէն՝ չգտնուեցաւ մի ձեռնհաս Հայ՝ որ նորա դամբարանին վերայ (Օշական) կանգնուած եկեղեցւոյ վերանորոգութեան համար մեծանպատ նուէր առաքէր, զոր Վեհ. Հայրապետ սկսած է շինել տալ . . . .

թեանց գոյութիւնը և զարգացումը հ֊ բախտապարտ և պարտական Մ. Մհ֊ րովբի և Սահակ Պարթևի մեծավաստակ ջանից. բայց ես կասեմ, զի նոյն իսկ Հա֊ յութիւն և Հայաստանեայց եկեղեցի՝ ցայսօր իւրեանց գոյութիւնը երախտա֊ պարտ են յիշեալ երանելեաց և նոցա ա֊ շակերտաց անխոնջ և յարատև ջանից և վաստակոց։ Ծողոմք յիշել եկեղեցական ինչ ինչ բարեկարգութիւնքը և նոյն իսկ եկեղեցական երգոց կանոնաւորութիւը և ձայնադրութեան ծագիլիը։ Ծող հետա֊ քրքիր բանասէրն քննէ պատմութիւնքը և բաղդատէ ժամանակները ընդ միմեանս։

Սոցա բարեվաստակ սերմեր երբ բարե֊ բեր երկիրներ անկան, այնքան արդիւնա֊ ւորութեան՝ զի այնուհետև օտարազ ա֊ մեն աղքեցութիւնք և ջանքեր գրեթէ իսպառ չկատուեցան և անզօրութեան մատնուեցան. թագաւորաց և նախարա֊ րաց մի միայն վառատէր նպաստակներով և անձնասէր իղձերով ցանած խառնուր֊ թիւնք անգամ ոչ այնքան նշանաւոր հարուածներ տալ կարող եղան թէ ե֊ կեղեցւոյ և թէ ժողովրդեան, զի Եկե֊ ղեցին ինքնին իւր ինքնուրոյնութիւնն և գերիշխանութիւնն ստացած և ապա֊ հովեալ էր, որով նոքա ևս հետզհետէ պարտաւորուեցան Եկեղեցւոյ և ժողո֊ վրդեան հետ սերտանալ։

Ընդարձակ յաղթութիւն վաստա֊ կեցան Մեսրովբ և Սահակ Պարթև ե֊ րանելիք Հայոց Եկեղեցւոյ անցեալին՝ ներկային և ապագային համար, և նոյն արդիւնքը ուխտիւք աւանդեցին ձեռա֊ բիս Հայոց։

Ո՜հ, չեմ կարող առանց արտասուաց ընդհատել ներկայս, քանզի վառուած և ոգևորեալ եմ սոցա յիշատակներով և արդեամբք, և այնքան կախորժիմ՝ որ սո֊ ցա վերայ հակիրճ անգամ գրել պարտա֊ ւորուած լինելով՝ չեմ յագենար երբէք։

(Շարունակելի)

ՎԱՀՐԱՄ ՓԱՐԱՄԵԱՆ ՄԱՆԿՈՒՆԻ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ի ՎԵՐԱՑ ՏԻՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՐՕՆԻ

ՆԱԽԿԻՆ ՀԱՑՈՑ։

(Շարունակութիւն)։

Ա.—Ընդգալն էր Հայոց երևելի կամ նիւթեղէն աստուածն. այս երկրի սիրե֊ կան աստուածն էր, ինչպէս էր նիւթեղէն Հուրն պարսիկներուն համար. թէև արևոր֊ դնքն կամ արեգակի պաշտողներն կրած լինէին աւելի հայածանք՝ քան թէ ևէ֊ պըրներն, նրանցից ոչ սակաւ հաստա֊ տութիւն են ցոյց տուել իւրեանց կրօ֊ նական կարծեաց մէջ։ Ըր նայելով այն աստիճակ հալածմանց՝ որ նոքա քաշել էին եղեալ և կէս դարուց ի վեր, Ա֊օրօասթ֊ րի վարդապետութեան աղանդաւորնե֊ րէն աւելի, նորանց սերունդից մի փոքր թիւ դեռ կենդանի են մեր օրերում, և վարում են մի խաւար կեանք զա֊ նազան կողմերում, Տիգրիսի, և Եփ֊ րատի երկրներում։ Ըյս աղանդաւորների պաշտումը կարգուած է Ա֊օրմիական տաս֊ ներկու նշանների վերայ, որ կոչում են

ռամկօրէն Հանդիստ, այս ինքն կացարան: Նոքա հռչակում են իւրեանց մէջ մասնաւոր տօներ տարուայ չորս եղանակների սկզբանն, որոց կոչում են ժամանակի անիւ, կամ թէ արեգական կեանքի անիւ: Արեւ երկիր և երիտասարդութիւնը, արեւմուտքը և հասած հասակն, ամառը և օրական հասակն, հիւսիսը և ծերութեան հասակը, են ըստ նոցա արեգական կամ մարդկանց կենաց աերութեան չորս անկիւնքն:

Ը.—Երևի որ՝ ի նախնումն այս երկրի քաղաքական կառավարութիւնն՝ ինչպէս և այն ժամանակուայ ունեցած աստղագիտական տեղեկութիւնքն, սերտիւ կապուած էին արեւպաշտութեան հետ: Տասներկու զօդիական նշանների հասարակ անուններն՝ որպէս Ոչխար, Ցուլ, Առիւծ, Կոյծեղջիւր, և այլոց, այս լեզուի մէջ են այն երկնային նշանների, քաղաքների, լեռների, նահանգների անուանքն՝ որոց սկիզբն մեզ երևում է լինել պատմութեան ծագմանից յառաջ: Այս կարծիքը աւելի հաւանականութիւն է ստանում՝ երբ տեսնում ենք նախնիքներից ցոյց տուած աստեղատանց բազմաթիւ անուններն, որք են նոյնպէս նշանակիչ առնուանք Հայաստանի և մօտակայ երկրների նախկին աշխարհագրութեան մէջ, որոնք են օրինակի համար արջ, վիշապ, օձաձև, անգղ, օձ, արծիւ, գայլ, հիւրայի և այլ անուանք: Իրողութեանց այդպիսի նմանութիւնք, չեն կարող լինել ըստ իս, պատահարքի եղելութիւն:

Ը.—Զորղորդ աստուածութիւնը՝ որ պաշտում էին Հայերն, բնութիւնն կամ յայտ իւանեականութիւնն էր Նահիպ աստուածոհուհոյ անունն դտանվում է վանկերի կամ գրերի փոխադրութեանց մէջ, Լատինացւոց Դիան աստուածուհոյ անուան մէջ: Ըստ որակութիւնքն՝ որ ընծայում էին երկոքին էլ, իւրեանց յարգելի աստուածուհոյն էականապէս մի և նոյն էին. Հայերն համարում էին Նահիտին ինչպէս իմաստութեան, ոյժի աստուածն, նախատեսութեան, թագաւորութեան պաշտպանողուհին, քաղաքական ժառանգութեան պաշտպան, և առիւծ ամեն բարութեանց՝ որ երկիրը արտադրում էր: Հինել էին ի պատիւ նորան գեղեցիկ տաճարներ Երիզ, Երախշատ, Երատաշատ, Անի, Բագաւան և ուրիշ քաղաքներում: Երկրի թագաւորներն կանգնացրել էին նորան ոսկէ, արծաթէ կոթողներ, նորանանուանում էին աղբիւր կենաց, մայր իմաստութեան, փառք և պաշտպան Հայաստանի. նորա տօնը հռչակվում էր ամեն տեղ շատ մեծարանքով, և իւր երևելի հանդէսը լինում էր հասարակօրէն ամառուայ միջոցին՝ երբ վարդերն դեռ ծաղկած են, և սորա համար կոչում էին Վարդավառ, այս որ ասել է վարդերի փառաւոր զարդարանք: Այս աստուածուհոյ տաճարը և արձանը այն ժամանակ զարդարուած էր լինում այդ ծաղկովը՝ որին համարում էին ինչպէս մի խորհրդական նշան գեղեցկութեան և բնութեան շքեղանաւոր նորոգութեան: Այս տօնը հռչակելու համար՝ ամենեքեան պձնվում էին՝ ինչպէս նա և տուներն ճակատներն՝ փողոցներն և հասարակաց տեղերը զարդարում են վարդերով:

Թ. — Արիամանէս թեան վճռական հաստատութիւնից յետ՝ Հայաստանում չի կարողացին բոլորովին հաղթանել այս վարդի սովորութիւնն, և ոչ ջնջել Աբդաւառի անունն՝ որ ժողովուրդն սովորած էր։ Նորա փոխանակ հաստատեցին Յիսուսի Արիստոսի Աչլակերպութեան տօնն, պահելով մի և նոյն Աբդաւառի յարջարջումն, և շարունակեցին միշտ զարդարելու մի և նոյն քաղաքական սովորութիւնքն ի պատիւ Արիստոսի նոր կարգեալ տօնի հետ։ Որովհետև Ընտհիսի տօնի հանդիսակատարութիւնը տևում էր երեք օր մի գինէ միջէ, նոյնը շարունակում էն նաև աչլակերպութեան տօնի համար՝ որ միշտ ուշ Հայս կատարվում է աւելի շքեղութեամբ՝ քան թէ ուրիշ քրիստոնեայ ժողովրդոց մօտ. նա Յոհաննեան և Ջատկի տօներից յետ՝ գրեթե տօներից մէկն է *)։

Յ. — Հայերի հինգերորդ և վեցերորդ աստուածութիւնն էր լուսինն և արուսեակ մոլորակը Նահիկ անուամբ՝ որ ասել է գեղեցիկ աղջիկ։ Ոմանիներն նորան տալիս էին նաև արուսեակ անունն, որ նշանակում է առաւօտեան երևոյթին կոչվում էր Ասաբեր՝ այս ինքն լոյս բերող, և գիշերեանն կոչվում էր Գիշերաւար՝ այս ինքն գիշերուայ առաջնորդը։ Նահիկեան են վերաբերում իրկ կանանց հոգատարութիւնն, և ազատիչ թշուառութիւնից նորատի դուստրներին և հարսներին։ Ըստ յիշեալ վեց աստուածութիւններից առաջին երեքն համարուած էին արուներ և վերջին երեքն՝ էգեր։ Նոյց ամենն էս հատատարապէս համարվում էին որպես բարերար աստուածք, բարեկամ մարդկանց, հրամայող և պաշտպանող սիերակերաց։

Ե. — Ըստ մերկի մի հօթներորդ աստուածութիւն կոչվում էր Ահաբն, այս որ ասել է ժողովուրդ աշխարհութեանց, նա էր քաղաքների և գիւղերի բնամակալ ոդին, ընդդէմ ձիւաղներին և վնասակար մարդկանց վայրենի գազանների. նորան պաշտում էին հատարակօրէն անտառներում և այրերում։ Ըստ աստուածի անունն ներկայացնում է երկնագնդի մէջ, հիւսիսական աստեղատանց մէկին և հատկացրած է Լերակլեսին։ Մի քանի ժողովրդական աւանդութիւններ վերաբերելով այս պահպան աստուածուն, պահպանուած են մինչև այսօր մեծ Հայաստանի զանազան կողմանց բնակիչների մէջ. ըստ նոցա պատմութեան՝ Ահաբն էր բարեկամ մարդկանց՝ մանաւանդ հովիւների և մշակների. նա իշխում է երկրի և ջրի վերայ. նորա շունչը մի աւետաբեր հրեշտակ է օդ՝ որ տարածվում է ամենայն տեղ և մի կործանիչ թոյն է վայրենի անասնոց համար։ Մովսէս Խորենացին յիշում է և նոյնպէս Ահաբն աստուածոյ մասին՝ մի քանի նշխարք երգի՝ որ այսպէս էր ձեւացած. ‘‘Երկնէր երկին և երկիր, երկ- ‘‘նէր և ծիրանի ծով, երկն ի ծովուն ու- ‘‘նէր ղիսրմրիկ եղջնիկն, ընդ եղջան ‘‘փող ծուխ ելանէր, ընդ եղջան փող- ‘‘բոց ելանէր, և ի բոցոյն պատանեկիկ ‘‘վազէր, նա հուր հնր ունէր, ապա թէ

(*) Ջամչեան. հատ. Ա. էջ 620. — Աւետիքեան բացատրութեամբ. Հայ. նկեղ. շարականներին, էջ. 45։

«բոլոր ունէր մուրուս, և աչկունքն էին «արեգակունք» *)։ Կնոջով ուշադրութեամբ այս տեսակ պաշտումը, որ առաջ էին իւրաքանչիւր ազգային չաստուածքի, կարող ենք կարծել՝ որ Վահագն սկզբումն էր մի ժողովրդական չաստուածութիւն։ Մինչ որ քաղաքական առաջադիմութեան ժամանակ Հայաստանի ժողովուրդը և թագաւորն հին ժամանակում անում էին աղօթք բոլոր քաղաքի չաստուածոց, բայց ի Վահագնից. հայցում էին նոցա օգնականութիւնը, և հռչակում էին տարուայ զանազան եղանակներում հանդիսական տօներ ի պատիւ նոցա. բայց չէ տեսնուած որ հայերէն հրապարակաբար Վահագնի անունն, եթէ ոչ հեթանոսութեան վերջին դարերում, և չեն իմանում ոչ մի տօն՝ որ նորա անուամբ լինի։ Գիտելի է՝ որ Հայերն և Վրացիներն կատուցել էին պատկերներ ի պատիւ նորա, և ընծայում էին նորան յարգանք. բայց միայն Եշմիշատ քաղաքում դտնում ենք մի արձան և մի տաճար ընծայուած այս զիւցազնական չաստուածին։ Այդ տաճարին ծառայող քուրմերն պահանջում էին թէ՝ իրենք սերուած են այս աստուծոյ ցեղից, և որի վերայ միջոց կունենամ մի քանի տարբերութիւնք տալ։

ԺԲ. — Ըստ առասպելական աւանդութեան հեթանոս քրմերի, յիշեալ երկրի մի քանի երկերի մէջ, այս Վահագն չաստուածն մի և նոյն Վահագն թագաւորն էր, որ տարել էր ցրիվ 500 տարի համաշխարհական թուից առաջ և ատում էին՝ որ սրել էր երևելի զինուորական գործեր, և կռուել էր նաև ընդդէմ վիշապների, և թէ ի պատիւ նորա էր որ Վրացիք կատուցել էին մի արձան համեմատ իւրեանց ժամանակի մեծութեան*)։ Այլ այս պատմութիւն մեզ երևում է լինել առակների հիւսուածք։ Որովհետև Վահագնից առաջ ազնուական և մեծանձն իշխաններ չեն չաստուածացած երբեք Հայերից։ Ունք գտնում նոյա պատմութեան մէջ ոչ մի իրողութիւն՝ ոչ մի նշանակ՝ որով կարողանայինք հաստատել՝ որ այս ազգը որ և իցէ մի անգամ պաշտեալ է չաստուածութեան պատիւը իւր իշխանաց կամ իւր երկրի նախկին ժամանակների անձերից մկկին։ Եթէ Հայերն սովորութիւն ունեցած լինէին չաստուածացուցանել իւրեանց նախնիքը, պարտաւոր կը լինէին նոքա շնորհել այս նշանաւոր շնորհը նորանց՝ որոց համարում էին ինչպէս աղբիւր մարդկային ազգի, որպէս առաջին պատրիարք և առաջին տիրապետ իւրեանց երկրի և իւրեանց ազգային հաստատութեանց, հեթանոս քրմերն և հին պատմագիրներն ևս կարող էին շահաւէտ պատճառներ համար կամ թէ այլ մտածուած խորհրդով, հաստատել սուտ և անհաւանական կարծիքներ. բայց շարունակելով մեր հետազօտութիւնն մի երկրի ամբողջական պատմութեան վերայ՝ և նորան համեմատելով իւր բարքերի, իւր կրօնաւորական կարծեաց և սովորութեանց հետ, որոնք գրեթէ մի և նոյնն եղել են մի քանի դարերի միջոցում, մարդ վերջապէս կարող

(*) Մովսէս Խոր. Գիրք. Ա. գլուխ 30։

(*) Մովսէս Խոր. ibid.

է զատել սուրգութեամբ սուտը ճշմարիտ, և բնաշխարհի գաղափարներն օտար կար-ծիքներից, որ մի քանի մահնագիրներ կցած կը լինէին իւրեանց գործքին:

Այն քրմերը՝ որ տալիս էին մի նոր ծա-դումն Վահագն չաստուծուն, նոյնացնե-լով նորա անունն Վահագն Թագաւորի անուան հետ, իմանում էին իւրեանց մի և նոյն ժամանակ սերուած այդ իշխանի ցեղից, նոքա իւրեանց համարում էին որ-պէս նուիրական ընտանիք, և ուզում էին ունենալ մի կուռք աւելի՛ն տաճարի մէջ՝ ուր ծառայում էին: Այն քուրմերն կոչ-վում էին Վահունիք և սերուած էին հաւանականաբար Վահէ Թագաւորի ցե-ղից, որ սպանուեցաւ մեծն Ադիքամղրից յամի համաշխարհական 330: Մակայն բարձրացնել էին տալիս իւրեանց ցեղի սկիզբն 200 տարուց աւելի, և ուզում էին ունենալ իւրեանց նախահօր համար մի իշխան՝ որի անունն էր մի և նոյն ժամա-նակ երկրի չաստուծոյ անունն:

ԺԹ.— Բայ ի այս հօրէը ազգային աս-տուածներից՝ որ ցոյց տուինք, բազում ուրիշ չաստուածներ ևս կային մոցրած օտար գաղափարներից: Ասորեստոց Ռհէ, և Խարշամ չաստուածներն պաշտում էին հրապարակաբար Հայաստանի գաւառնե-րում: Փիւնիկեցիք որ յաղարթ վարուե-ցան Տիգրան Ա-ից՝ այն ահագ բերին Ամօն Երամազդի կրօնը: Խազտան քաղաքը՝ որ ասել է կուռքերի տուն, և որ շինուե-ցաւ Երշակունի Թագաւորներից, ունէր մի տաճար ընծայուած յատկապէս այդ աստուածութեան, որին կոչում էին ամա-նօր կամ Թէ աստուածութեան աստուած. Երաբ և Սիբիայի գաղթականներ պաշ-տում էին նա և իւրեանց Նաբօ, Նաթ-նէքալ և Թարաթա չաստուածներն: Հնդկացիք բնակուած Տարօնի նահան-գում պաշտում էին իւրեանց Վէմէոր և Վխանէ չաստուածներին. Հրէաներն պաշտում էին հաւատարապէս իւրեանց հօր աստուածն, պահում էին իւրեանց շաբաթն և Թլփատութեան օրէնքն: Ըր-տաշէս և իւր որդի Տիգրան Ա-ն յատկա-կալ էին Յունաստանից և բերել Հա-յաստան Երեմիայի, Ասդղ, Էթանասի, Վիւլքանի, Հերքիւլէսի, Ապողոնի և Երամազդի կուռքերն Յոյն գաղթական-ների հետ: Այս արձաններ դրուեցան այն ժամանակ Հայաստանի զանազան տա-ճարներում բնաշխարհիկ չաստուծոյ մօտ՝ փոքր ինչ նմանութիւն ունէին, որովհե-տև նորանց տալիս էին մի և նոյն առա-քինութիւնքն և պաշտպանողութիւնքն: Ի Թիւս այս կուռքերի գտանվում էին եր-կուսն նուիրուած Երեմիային, այն ժա-մանակ դրին մէկն Երիզայի տաճարում Հայոց Անահիտ չաստուածուհոյ մօտ, և միւսն Երամաիրի տաճարում Ապողոնի արձանի հետ, Միհրի և Երամազդի մօտ. Իւփիրեսի արձանն դրուեցաւ Անի տա-ճարի մէջ Երամազդի մօտ. Վիւլքանի առձանը գտնվում էր Խոզարիս քաղա-քում, և նրան պաշտում էին Հեփեստոս անուամբ. Պալլաս՝ որին կոչում էին Երբեմն Նանէ, Երբեմն Էթենաս, դրուած էր Թ-իլն աւանի տաճարում: Երուսեկի արձանն պաշտում էին Աշխիշամի տաճարում Ասդղիկի հետ, և Հերքիւլէսի չաստուածն գտանվում էր հաւատարապէս մի և նոյն տաճարում՝ որ պահուած էր Վահունի

քրմերից Վահագն անուանեմ *)։ Խոշոր այս օտար հաստուածներն հաւատարատէս պաշտուած էին Հայերից բայց ի Հրէաններից, որ ունէին առանձին կրօն և արարողութիւնք։ Ուրիշ օտար գաղթականներն խառնուում էին դիւրութեամբ բոլոր նաշխարհիկների հետ, սովորում էին նոցա վարքերն և հետևում էին անորոշաբար նոցա քաղաքական—կրօնական սովորութեանց։

(Շարունակելի)

Թ. ՕՐ. ՍՕՖԻԱ ԱՂԱՖԵԼԵԱՆՑ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԱՐԱԿՈՑՍ.

(Շարունակութիւն և վերջ)

Երբ 1850 ամին վեր անդր յիշեալ որդիս Լաֆարիանց... ճեմարանէն եկաւ Տիֆլիս, և հրամանաւ հանգուցեալ Ներսէս Սրբազան Հայրապետի կարգեցաւ մանկավարժ Ներսիսեան Դպրոցի ստորին դասատան, ուր ես յայնժամ վերատեսչի պաշտօնն ունէի, մտադիր ականջ դնելով Տիֆլիսի Հայոց քահանայից և իմ ընթերցուածոց առաքանութեան, և մանաւանդ աշակերտեալ մանկանց ըստ գաւառաց գաւառաց արտասանութեան, յաւուր միում Ռափայէլ որդիս առարկութիւն արաւ այն զանազանութեան ազգաւ, որ գտանվում էր իմ և տեղական քահանայից և մանկանց հնչմանց մէջ. որովհետև՝ որպէս ես, նոյնպէս և Վեհափառ Ներսէս, և Շահխաթունեան Յովհաննէս Եպիսկոպոսն, և Մինաս Եպիսկոպոսն, և ունինք ի քահանայից՝ որք էին յաբևելից Հայաստանի, ըստ ամենայնի Արարատեան հնչիւնն ունէինք բ, ե, պ, ս, ի, և տ տառերի մէջ, իսկ Տիֆլիսեցի Հայ քահանայք և բոլոր Տիֆլիսեցի աշակերտք և վարժապետք տեղական հնչիւնն էին գործ ածում, մինչ վիճակաւոր առաջնորդն Կարնեցի Արքեպիսկոպոսն Սրբազան Կարապետ, քահանայք և վարդապետք, որ Հայոց աշխարհէն էին գաղթեալ, ըստ ամենայնի Օսմանցւոց Հայերէն բարբառոյ հնչիւնն էին ի կիր առնում վերոգրեալ վեց տառից մէջ, հարցուց թէ արդիօք ճի՞շդ եմ կարծում ուղիղ։ Ես՝ որ վաղ էի այդ մտածել, դնե՛ս Աստրախան և Նոր—Նախիջևան քաղաքներումն վարժապետական պաշտօն վարելոյ ժամանակն, պատասխանեցի՝ թէ «Թէպէտ պարտաւոր ենք Արարատեան հնչիւնն նախընտիր համարել և պահել, որպէս և միշտ ի մանկութենէ պահել եմ՝ ինչ հօրիցս լսել եմ, բայց ճիշդ դատաբննութիւնն ցոյց է տալիս, որ Տիֆլիս առաւել մերձ լինելով Արարատայ, որ յաճախ էր ճնում թշնամեաց հարուածոց նեղքոյ, երբ Արարատ իւր երկարատև գերութեանց մէջ մնալով՝ Պարսից մարզպանաց և Հազարաց ցոյց ոստիկանաց ժամանակներումն՝ իւր բնիկ բարբառոյ հնչիւնը հարկադրուել է կորուսանել զանազան չարաբաստիկ շրջապարձից լեռնութենէն ճնշվելով, Տիֆլիս՝ հաւատարիմ աւանդապահ է հանդիսացել նախնեաց գանձուն, և այս իսկ պատճառաւ՝ Տիֆլիսի հնչիւնն պիտի համարուի աւելի մերձ այն հնչմանց՝ ինչ Մեսրոպ տուել է իւրահնար տառերուն, թէ Հայոց և թէ Վրաց, և ինչ որ թարգմանիչք՝ մատենից թարգմանութեան ժամանակն տուել են իւրաքանչիւր տառից այն բնիկ ձայնն՝ ինչ որ նոքա ունէին թարգմանելի գրեանց տիրող ազգաց շրթանց մէջ։

Մովսէսի Խորենացւոյ պատմագրութեան մէջ երևում է՝ որ Հայերէն տառից հնչիւնն յարմարեցուցած է այն տառերի հնչմանց, որովք արտայերվում են յատուկ անուանք այն լեզուի յորմէ թարգմանուել են մեր մատեանք, և ըստ այնմ պիտի պահէին իւրեանց հնչումն անվթար. և այժմ տեսնում ենք՝ որ Բաբելոն՝ բնիկ Բազդային հնչում է Babilon. Բէելզեբուղ՝ Հրէից բառնին հնչում է Beelzebub. Գողգոթա՝ Հրէից յարմարագրութեամբ հնչվում է Golgos. Դաւիթ՝ David, Ադամ՝ Adam կամ Adm, Աբել՝ Abel, Դան՝

(*) Մովսէս Խոր. Գիրք Ա. գլ. 11. 12. 13.

Dan, Գաբրիէլ՝ Gabriel, Գեդէոն՝ Gedeon, Գրիգոր՝ ըստ Յունաց արտաբերմամբ է Greqorios, Գէորգ՝ Georg, Դելփոս՝ Delfos; ձկին՝ delfin, ևլն ևլն։ Ռափայէլն այս գաղափարն 1851 տարաւ իւր հետ ի Ս. Պ. Բուրգ և ի Դորպատ, և անդ իւր աշակերտակցաց և ընկերակցաց և հասակակցաց հաղորդեց անյոդդոդ համոզմամբ։

Ուսումնասէր և հայրենասէր հայազգին Կ. Ց. Եզեանց, գուցէ իւր մտադիւր ուշադրութեամբ կամ Ռափայէլէն ընձեռեալ առանգութեամբ՝ իւր սեպհական առանձին վարժարանի մէջ՝ տեսայ որ ի քանի ամաց հետէ սկիզբն էր արել մէկ քանի տառից հնչիւնն ուղղել ըստ հնչմանց Տրփխիայ, որ ինձ յոյժ հաւանական երևեցաւ, թէպէտ և իմ՝ սովորական գործածութեան եղանակին էր և ցարդ ևս՝ է ըստ ամենայնի հակառակ։ Եւ յետոյ տեսայ՝ որ գիտնականն Քերոբէ Պատկանեան, առիթ տեղեակ լինելով մեր լեզուի ծագման և արմատական կանոնաց և նոցա աղբիւրներին, նոյնպէս համաձայն է Ռափայէլին՝ իւր անվթար արտասանութեամբ։ Նոյնպէս և Մ. Մ. Միանսարեանց, որ Տրխխի ծնունդ գոլով՝ կամ պահել է իւր բնիկ առոգանութիւնն, կամ չէ կամեցել սեպհականել Լազարեանց Ճեմարանի եղանակն, այլ հետևել է՝ կամ իւր ի դրոց համոզմանց, կամ վերոյանուանեալ երկուց Պատկանեանց և Եզեանցի դրութեան։

Սոքա չորքին, և աշակերտք առաջնոց երից, և համայն գերազանցք չորեցունց, բ, ք, դ տառերն հնչեմ՝ են ըստ Տրխխեցւոց, մինչ այս եւթը տառք՝ Արարատեան բարբառոյ մէջն հնչեմ՝ են այլազգ։ բ, որպէս Լատին P, կամ՝ Ph, ֆ, որպէս Լատին k, կամ՝ c, ք՝ որպէս Լատին T, կամ՝ th, որպէս և ի բարբառ Պօլսեցւոց։ իսկ ի Տրխխս բ՝ հնչեմ է որպէս Լատին B. ֆ՝ որպէս Լատին g. իսկ ք՝ որպէս Լատին d. ։ Ի Պօլիս՝ որպէս ասացի ներհակ Տրխխեցւոց, և համաձայն Արարատայ՝ Բենն հնչեմ է մերձ P կամ՝ Ph. ձայնին. Գիմն՝ մեր k կամ c Լատին հնչմանն, իսկ Դա՝ մերձ Լատին t կամ՝ th ձայնին։ Որոյ հակառակ է՝ ի Պօլիս ունի այն հնչեմն, որ ինչ ի Տրխխս ունի ֆ, համաձայն g տառին Լատինաց. ֆ՝ ի Պօլիս այն, ինչ ի Տրխխս՝ բ, ըստ b տառի Լատինաց. տ՝ ի Պօլիս այն՝ ինչ ք ի Տրխխս համեմն d Լատինաց։ Ես յԱստրախան զարգացեալ՝ թէպէտ և ի մանկութենէ այնպէս եմ սովորել, ինչպէս Երևանցւոց բարբառն է, և անփոփոխ պահել եմ, որպէս և համեցեալ Սբրբազան Ներսէս Հայրապետեան մինչ ի վախճան իւր պահեց անփոփոխ, սակայն երբ տեսայ՝ որ Պ. Եզեանցի աշակերտաց մէջ հասարակեալ է, և Քեռմոլքէ Պատկանեանն և Մ. Մ. Միանսարեանց անսպրթաք պահում են, և իմ որդւոյ աշակերտաց մէջ ևս յետոյ հասարակեցաւ, և այժմ ևս մշտնջենաւորում է՝ Տրխխեն (Ռափայէլի միջնորդութեամբ) բերած հաւանական հնչիւնն, ինձ հաճոյ երևեցաւ ու, որովհետև այլազգական յատուկ անուանց հնչիւնն ըստ Լատին, Յոյն, Ասորի և Հրեայ յարմարագրութեանց մատնցոյց էին լինում՝ որ մեր թարգմանիչ Հայք՝ ոչ Հայոց լեզուն կըկամենային ազատաղել, և ոչ այլազգական յատուկ անուանց հնչիւնն խանգարել, և այդ իսկ դիտաւորութեամբ՝ Յունաց քան և չորս տառից հանդէպ Հայոց լեզուի համար երեսուն և վեց տառ հնարեցին. եթէ արդարև պ տառն պիտի համապատասխանէր Լատին b տառին, քր Babilon անունը չէին գրում Պապիլոն, այլ թարգմանել են Բաբիլոն. ուրեմն նոցա գրչի տակն՝ և չրթանց մէկ մի օրինակ է՝ արդարև հնչել է որպէս Լատին B, թէև այժմ նորա ազգակից Babel mandeb, գրում են Պապել մանտէլ։ Այսպէս և ֆ՝ հնչել է որպէս Լատին g, ք՝ որպէս Լատին d, պ՝ որպէս Լատին P, կ՝ որպէս Լատին k, տ՝ որպէս Լատին t։ Constantimopol պիտի գրէին Քօնսթանթինոփօլ, և ոչ Կոստանդնուպոլ, եթէ կ տառն չունէր Լատին c տառի հնչիւնն, տ՝ չունէր t տառի ձայնն, և պ՝ տառն պիտի չունէր p տառի ձայնով։ Polis պիտի գրուէր Բօլիս, կամ՝ Փօլիս, և ոչ Պօլիս։ Betlehem պիտի գրուէր Պեթլէհէմ, և ոչ Բէթլէհէմ. բայց տեսանում ենք՝ որ մեր թարգմանիչք առաջ կանոն են դրել, և ապա թարգմանել, պահելով ճիշտ Յոյն և Լատին լեզուաց յարմարագրութիւնն. իսկ յետ ժամանակաց՝ չըգիտեմ ինչ պատճառաւ սկսել են ուրեք ուրեք փոխել, և այս փոփոխութեան մէջ անստոյգն քան զստոյգն նախընտրել։

Իմ դիտաւորութիւնը այն չէ՝ որ ասեմ՝ Թէ ինչ ինձ հաճոյ է և հաւանելի, այն Թող լինի համաձայնի լեզուի կանոն. Ո՛չ։ Այլ կամիմ ասել, Թէ անհնարին է՝ որ ազգի մէջ չգտնվի մէկ այնպիսի անձն՝ որոյ չհամարուի անպատշաճ տաւտոլութիւն այս առարկայի վերայ խորհիլ, ի խորհուրդ հրաւիրել և անօրինել. Այդ անձն՝ Թէև ինքն ազգի Հայրապետն լինի, (և բաց ի նմանէ ով այլ պիտի ունենայ իրաւունք և փոյթ Ազգի համար՝ բարբառոյ Թիւրահնչիւն տառերն ուղղելոյ, որպէս և օտարազգի բառերն մերժից լեզուէն և բարբառն մաքրից), քաջայայտ է որ չի կամենար բացարձակ ասել՝ Թէ այս՝ Թող այսուհետև այսպէս լինի, և ոչ այնպէս, այլ նախ կըշարժէ իւր գարձր և բանադակ ազգին լսելի և ախորժելի բարբառովն այս խնդիրն, և կյառաջարէ ազգի ականատես դիտնականաց՝ այս մասին առաջ կանոնաւոր վիճաբանութեան պայքար բանալ լրագրաց միջնորդութեամբ, և նմանապէս գլուխ գլխի տալով քննել, և ամենեցուն կամ հիմնարկին մասին համաձայնութեամբ և հաճութեամբ՝ ըզարդ բարին ժողովելով յամենայն, և զխոտանն ի բաց ընկենլով, դատակնիքն և այն վճիռն հրատարակել գործեալ ի ձեռն լրագրոյն. ապա այն արդէն հրատարակեալ և ամենեցուն ընդունելի եղեալ դատակնիքն վաւերացուցանել Հայրապետական կնիքեամբ, որ դառնայ օրէնք յաւիտենական, և մեր յետնորդք ունենան վերջ ինչ յորդորեալ Հանապարհ ըզդացմանն.

Ես այս առարկայի վերայ խօսել եմ քանիցս Հանգուցեալ Սրբազան Ներսէս Հայրապետի հետ դեմ առ դէմ, և նա միշտ համաձայն էր՝ որ այդ նիւթն դառնայ Ազգային Ժողովոյ քննութեան առարկայ, և վճիռ ստանայ ամենեցուն Հաճութեամբ. Բաց այժմ ութոնական ժողովոյ կարէ արդիւնաւոր լրագիրդ Արարատ ժողովել ի բերանոյ Հայ վարժապետաց, վարդապետաց և ուսումնականաց՝ նոցա իւրաքանչիւրոյ կարծիքն, և այն կարծիքն հետզհետէ հրատարակել անփոփոխ, և վճիռն՝ դարձեալ ի շրթանց ուսումնականաց և պետականաց ազատել և ստանալ, և ըստ այնմ մեկ անշարժ կանոն Հաստատել, և այն կանոնն Հայրապետական կնիքեամբ նուիրագործել և սրբագրացուցանել, որպէս Հանգուցեալ Ներսէս Սրբազան Հայրապետն վարեցաւ Հայոց Թուականն նորոգելոյ ժամանակն, Թէև նա ոչ ամենայն Հայոց ազգի Հետ ունեցաւ խորհրդակցութիւն, որով և ազգասիրական լրագիրդ կյաջողէ լուծանել ոչ միայն իմ տարակոյսն, զոր գուցէ Թէ յառաջ քան զկզբնաւորութիւն գործոյս՝ ինձ Հետ միասին կիմբացանեմ ի գիրեղման, այլ և բազմից տարակոյսն, որովհետև այն մեկ քանի տարից Հընչմանց զանազանութիւնն է անուամ բազում անգամ գնաղատութիւնն և անուամ բազում անգամ գնաղատն խուժ և գնողն դուժ։

Ի վեր անդր այսացի՝ Թէ ինձ Հարկաւորութիւն Հանդիպեցաւ՝ որ այս նիւթոյ վերայ գրուագ մտածութիւն անեմ, և տարակոյս հրատարակեմ։ Տարակուսանացս մին այն էր՝ որ վերն ասացի, իսկ միւսն այս է՝ որ այդ պիտի ասեմ։ Հայոց մանկանց դաստիարակութեան վերայ շատ ազգասէր ուսումնականք ձիգն են դնում՝ իւրաքանչիւրն Համաձայն իւր գաղափարի։ Այն ազգօգուտ գործերի աշխատութեանց մէջ փայլում է Մայրենի լեզու անուանեալ գրքոյկն, ըստ առաջին տպագրութեան, երկասիրութիւն Տէր Ղեւոնդեանց Պ. Նիկողայոսի, որ մեր ազգի մանկանց դաստիարակութեան սանդղոց առաջին սոորին ասոիճանն է. առանց որոյ վերայ ոտն դնելոյ՝ անհնար է մանկութեան՝ ի վեր ելանել։ Ինձ այն գրքոյկն տուեց ուսումնասէր և ազգասէր Մ Մ. Մխիթարեանցն, և ես ծայրէ ի ծայր մտադրութեամբ նայեցայ և տեսի, որ այն ազգապետան և գիտնական գործն արժանի է դարձուցանել իւր վերայ մեր ուսումնականաց մտադրութիւնն, և հրաւիրել իւրաքանչիւրոց օժանդակութիւնն՝ որ այն մանկանց նախակրթական ձեռնարկութիւնն կատարելագործվի՝ և լինի համապատշաճ նպատակի և բարեմիտ հեղինակին՝ և այն ծնողաց՝ որք իւրեանց զաւակի ձեռն տալիս են այն Այրենարանն, որպէս օսկիահոյլ բանալի՝ բացարան . . . գրանն Հայերէն գըլուխ։ Քան Թէ Հայերս անուն հեղեղումն զանազան անօգուտ Այրենարաններով, լաւ համարեցայ այն արդէն ժողովրդականութիւն ստացեալն լրացուցանել, որ նա գլխի երկրորդ տպագրութեան տեսնէ և երրորդ և չորրորդ տպա-

դրութիւնն, և օրքան հնար կայ՝ դիւրացին առնել։

Այսու դիտաւորութեամբ նորա մէջ խորամուխ մնայ, և նկատեցի՝ որ նորա մէջ կան այնպիսի կէտեր, որոց վերայ մեր ուսումնականաց բարեացական պարտքն է ուշադիր լինել, և այս դարձեալ էր գործածութիւնն ունենց տառից, որոց կանոնքն տակաւին են մեր առջևն որպէս պարտէզ փակեալ և աղբիւր կնքեալ։ Թէ և որպէս Զամչեանն Քերականութիւնն, նոյնպէս և ամենայն քերականք ըստ քմեց կանոնադիր են հանդիսացել, և փոխանակ ուղղելոյ՝ գուցէ թէ իսկ թիւրել են ևս անգամ։ Եւ ի՞նչ պատճառաւ պիտի մեր ուսումնականք այս կէտի վերայ մնադիւր ուշադրութիւն չդարձուցանեն. ի՞նչ է քան զայս առաւել մեր ուսումնականաց՝ զկնի աւուր պարենի՝ զբաղանքն և պարապմունքն, որ ուսումնական համախմբութեան մէջ տեղ ունենալէն զկնի՝ այսպիսի աղբօգուտ գործոյն չօգնեն։ Ա յս տառերն են՝ բաց ի վերոյիշեալ բ, ֆ, դ, պ, կ, տ՝ տառից, ձ, ջ, ղ և ե տառերն, որոց առաջնոյ վեցից հընչիւնն արմրի վերագոյնդ քննութեան առարկայ, իսկ վերջին չորից համար լռեցի՝ խոյս տալով յերկարաբանութենէ, և այս չորից վերայ աւելցնելով ռ, յ, ւ տառերն, և նոցանէ ուրոյն ը, վ, ո արժանի եմ համարում սոցա գործածութեան վերայ հրատարել՝ որոնել ուղիղ կանոնագրութիւն, որ ըստ ամենայնի փարատուի տարակոյսն։

Ես երբեմն երբեմն պարապում եմ գրականութեամբ, և իմ գրուածներս չափազանց հակառակ չեն այս մեր կողմանց սովորութեան, ուր իմ հօրս և իմ ապաստանութեամբ քան զկէս դարն երկարագոյն ժամանակաւ կեանք ունեցան Զամչեանի քերականութեան աւանդած կանոնքն։ Բայց երբեմն ևս ինչ ինչ ուղարկում եմ Ամիւնիոյ Արևելեան Մամուլն և Արշալոյսն Արարատեան, ուր քաջ գիտեմ՝ որ շատ բառեր այնպէս չեն արտասանուում, որպէս ես՝ հին Քերականութեան կանոնաց երկրպագուս, և նորոց կարծեաց մէջ տակաւին չհամոզուածս, որովհետև ամէն եմ համարում գետնատուածն նման ստէպ գոյնս փոխել՝ առանց ստոյգ հիմն գտանելոյ. բայց և ընդ նմին մնում եմ շուարուած, որովհետև դեռ չեմ խմբնում թէ ինչպէս պիտի գրուին մեր այն Հայերէն բառերն, որ Թուրքիոյ աշխարհի մերազգի բանիբուն գիտնականաց ծաղրելի չլինին, զոր օրինակ՝ անպատեղն կամ սպառ սպառուն՝ եթէ հարկ լինի տողի վերջաւմն կիսել, ընդ պատուէ պիտի գրվի, թէ սը-պառեղ, սպասն՝ ըս-պաս, թէ սը-պաս, զգեստն՝ զգ-գեստ, թէ զը-գեստ, զգօսանքն՝ զգ-գօսանք, թէ՝ զը-գօսանք, ստերիւրելն՝ ըս-տերիւրել, կամ ըստ-երիւրել, թէ սը-տերիւրել, կամ սըտ-երիւրել, սպասաւորն՝ ըս-պասաւոր՝ թէ սը-պասաւոր, ստլենանելն՝ ըս-տնանել՝ թէ սըտ-նանել, ստուգաբանելն՝ ըստ-ուգականել՝ թէ սըտ-ուգանել, ստամբակն և ստահակն՝ ըստ-ամբակ, կամ ըստ-ամբակ, ըս-տահակ՝ ըստ-ահակ, թէ սը-տամբակ, կամ սըտ-ամբակ և սըտ-ահակ, կամ սը-տահակ, սպունգ, սպանդ, ստոյգ, սխտոր, ստորոտ, ստորագրել, սը-տապատիր, սկիզբն, սկաւտեղ, սկիհ, սփածանիլ, շտեմարան, ստափիլ, շփոթ, շտապել ևլն, որովհետև այսպիսի բառեր բազում են յոյժ։

Նոյնպէս՝ «ո՞վ ի՞նչ ձայն պիտի հանեմ. վ՞վ թէ օ՞վ կամ թէ միայն օ հնչէ, կամ ո՞ր միջարկութեան ո կերպն վ՞ պիտի հնչէ, թէ օ։ Ցովհաննէս բառի մէջ վ տառն՝ ձայն պիտի հանէ՞, թէ ոչ։ Ցակոբ անուան մէջ անշուշտ պարտէ վ տառի ձայնն պահել, թէ Ցակոբ պիտի արտասանել։ Ի՞նչ է պատճառն որ ո տառն բառից մէջ երբեմն օ տառի ձայն ունի, և երբեմն՝ վ վանկի. իսկ բառից սկիզբն վ է հնչում ըստ առևելեայց, այս ինքն՝ որդի բառն՝ վորդի պիտի հնչէ, թէ օրդի, ոսկին՝ վօսկի՞ պիտի ասուի՝ թէ օսկի, որդն՝ վօրդն, թէ օրդն, օրդանք, օրդնոտել, որդան կարմիր՝ վօրդան, թէ օրդան կարմիր. որդեայ, հոգւոյ, աղաւնոյ և սոցա նման բառերի մէջ՝ ո՞ր ի՞նչ դեր ունի. անշուշտ պիտի ո տառի ձայնն լսուի՞ որպես վ, թէ պիտի կորչի, և միայն այն ցոյց տայ՝ առանց ձայնի՝ թէ չորրորդ հոլովման ներքոյ է. որդւոյ՝ որդվո՞ պիտի հնչէ, թէ որդո, հոգվո՞ պիտի լսվի, թէ հոգո, և միայն հոգո՞յ մէջ ո գրած է որ զանազանվի հոգ, հոգոյ բառէն։ Ես թէպետ մինչև այսօր բերանէս չեմ օրդոյ կամ հոգո, ո՝ միշտ վ եմ հնչել, և ո՛չ օ, ոչն՝ վչ, և ո՛չ թէ օչ. ոչն՝ վչ, և ոչ՝ օչ. բայց խըղճմտանքս ինձ նեղում է, և յայտնի տեսնում եմ՝

որ « յարաբերականն կամ միջարկութիւնն կապ-
րատ են բացատրութեան. « միջարկութիւնն թարգ-
մանութիւն է « կոչական միջարկութեան, « տէր,
և իսկապէս դրած է « կոչական նշանի տեղն, և
անշուշտ « տատի ձայն հանել տալոյ պատճառաւ
վ տառն աւելցրած է. իսկ մենք «վը փոխանակ «
արտասանելոյ՝ երբեմն «վ են ասում, և երբեմն
«վ. վերջին վ տառն պահելով ի պատիւ կով
բառին հնչման. և չգիտեմ՝ թէ այս որ դարու
պատ ղն է, մինչ տեսնում եմ՝ որ շարականի մէջ
քանի տեղ Յովհաննէսն՝ Յոհաննէս է. իսկ Յա-
կովբն՝ Յակոբ. Եօթն խոտաճարակաց շարականի
տան գլուխներն՝ Յոհաննէս են բաղձում, Յա-
ռաջ վերջին: Որ և ղեռաւոյս: Հառաջաբկ: վ չկայ:
Յակոբեայ Մծբնայ Հայրապետի շարականն օրհ-
նութեան՝ Յակոբ է, յաղթող և առաքե. Աստ-
ուածաբ. կարող եղեր: Նոյնպէս և Հանգստեան. Յա-
նապատնական ձոյզ. Անախտել էապղծութեամբ. կա-
տարեալ: Որ վան մէջ: Բարեբանեմք, և այլն.

Օ տառն՝ երբ ևս մնած լինի անգամ, յայտնի
է՝ որ Ներսէս Շնորհալին մեր « տառով գործ-
ածած օրհնեմք՝ աւրհնեմք է գրել և « տառի
տեղ է գրել և ոչ « տառի: Օրհնեմք ղեղ երգն
ճաշու ժամու, որ այբուբենի կարգաւ է գրած, ե-
թէ կամենար՝ կարող էր այլ բառ դնել, և այ-
լով սկսել, բայց աւրհնեմքն է նախընտիր կար-
գել, ուրեմն նորա ժամանակն օրհնել, օրհնութիւն,
և այլ այսպիսի բառեր, Պօղ, Պօղոս, գրվում էին
և արտասանվում էին աւրհնել, աւրհնութիւն, Պաւ-
լոս, կամ Պաղոս: Անառակի շարականն՝ որ
նոյնպէս ա, բ, գ, նորա սկիզբն կարգն ունի,
սկսուած է աւրհնեմք, գովեմք, բարեբանեմք: Գուցէ
թէ և միւս գրողներն (կուսակիցներն) եղել են
այբուբենի կարգաւ, և այժմ մեզ համար կորած
են, որովհետև կրօնաւորաց այսքան ևս բաւ է,
քանի պիտոյ է շուայլութիւն: Նոյն վերոգրեալ
խոտաճարակաց շարականի Յոհաննիսի տան
գլուխ այլի տեղ գրած է աւձնել մեղմ հայրա-
պետի, որպ փոխարէն օձնել դնելով՝ եղել է յա-
նձնէս: Հանդամանքն ցոյց են տալիս որ հեղի-
նակն աւձնել է գրել, և այլ տառի տեղ է
գրել և կամեցել է՝ որ Յոհաննէս կարդացուի,
քան թէ Յոհաննէս: Զեմ զարմանում՝ թէ աւրհ-
նութիւնն՝ օրհնութիւն է պատել, և աւծումն՝ օ-
ծումն, երբ ահագին Աւրիլիանոսն՝ Օրեղիանոս է
փոխուել, և Աւրելիոն քաղաքի անունն՝ Գաղ-
ղիացիք Օրլէան են շինել. բայց աններելի եմ
համարում՝ որ մեր Սրբազան Հայրապետի անունն
Գէորգ՝ չգիտենք թէ ուղիղ ի՞նչպէս պիտի արտա-
սանենք՝ Գէվո՞րգ, թէ Գէօրգ, երբ ուղիղ գրում
ենք Գէորգ, պէ՞տք է յառաջ քան զտառն « մե-
տացածին վ կամ – ևս յաւելուլ, ինչպէս հար-
կաւոր, կամ հոգևոր, կամ լուսաւորիչ բառերի
մէջ: Ա յսորիկ աղագաւ – տառն մեծ աշխատու-
թիւն է պահանջում, որ հնար լինի հաստատ ի-
մանալ թէ՝ ո՞ւր պիտի ձայն հանէ, և ո՞ւր մնայ
անձայն.

Ես թէպէտ քննելի տառից անուններն ի վեր
անդր նշանակեցի, բայց միայն ումանց համար խօ-
սեցայ, և մնացելոց համար չյօժարեցայ առարկել
անգամ, որովհետև առանց նոցա ևս յերկարեց
բանասիրականս, և ի հաճութիւն լրագրիդ Թո-
ղում զհրատարակութիւնն, որ մեր ազգի աշխա-
տասէր ուսումնականք՝ որք միանգամ արժանի
համարին այս իմ աւանդարկութիւնն՝ իւրեանց
պատասխանւոյն, իւրեանց կարծիքն մարմնացու-
ցանեն բացայայտութեամբ, որ զբննու քննեալ և
կշռադատեալ կանոնի զօրութիւն, և մեզ տա-
րակուսելի երևեալ խնդրոյ առարկայն՝ չմնայ և
մեր յետնորդաց համար տարակուսական:

ՆԵՐՈՒՆԻ ԴԱՐԲԻԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ·

ԱԶԳԱՅԻՆ

Վ. ԵՀ. ՀԱՑՐԱՊԵՏ.

Ընծայն Հայոց վ Հրհսիաւ Հայրապետիս յառաջիկայ Յունիս ամսոյ սկիզբները ուրեմն պիտի երթայ ի Խիւրական յա-մառանոցն:

ԳԵՐ. ԱՆԴՐԷԱՍ ԵՒ ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՔ.

Հ՝ամախուց վ՝իճակին Հռոմէ Տէր Սուրէն Գերդ. Ընդրէաս Ըրքեպիսկոպոս՝ ի տեղի Գեր. Գրիգոր Ըրքեպիսկոպոս Յօհաննէսի՝ Աթոռապահականի (Պարսկաստանի) վ՝իճակին Հայոց Առաջնորդ կարգեցաւ։

Գեր. Յօհաննէս Ըրքեպիսկոպոս Դաւրիժէն մեկնելով՝ ի 25-ն Մայիս հասաւ ի Ս. Էջմիածին, և յառաջիկայ Յունիս ամսոյ սկիզբները Գեր. Ընդրէաս Ըրքեպիսկոպոս ասաի կմեկնի իւր նոր վ՝իճակը երթալոյ համար։

Ս. ԽԱՉ ՎԱՆՑ ՎԱՆԱՀԱՅՔ.

Գեր. Գրիգոր Ըրքեպիսկոպոս Պաղինեանց՝ Հին-Նոր Ս. Խաչ վ՝անից վ՝անահայր կարգուելով՝ ի 24-ն ամսոյս ասաի մեկնեցաւ։

ՕՐԻՈՐԴԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ.

Մայիս ամսոյ 27-ին կատարուեցաւ վ՝աղարշապատի Օրիորդաց ուսումնարանի նորակառոյց բնակարանի օրհնութեան հանդէսը։—Ինչպես յայտնի է Ընտրատի ընթերցողաց քանիցս հաղորդած տեղեկութիւններից, վ՝աղարշապատու Օրիորդաց դպրոցը բացուեցաւ երկու տարի սորանից առաջ վ՝երհասիան Պաթողիկոսի ցանկութեամբ և հրամանաւ։ Ընկոնջ և ջերմեռանդ հոգացողութեամբ և ջանիք Հոգաբարձուհւոյ և Տիկնոջ սոյն դպրոցը սկսաւ արագութեամբ ծաղկիլ և յառաջադիմութիւն ցուցանել։

Նկատելով դպրոցի այսպիսի յառաջադիմութիւնը՝ նորին Օծութիւնն բարեհաճեցաւ միանձնաւոր յարատեւութիւն տալ նորան, ուստի հրամայեց Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի արդեամբք կառուցանել յատուկ բնակարան։ Ընդհանուր նորակառոյց բնակարանը, որը բաղկացած է մի ընդարձակ դահլիճից, մի մեծ դասարանից և երկու միջակ. սենեակներից բաւականաչափ ճարտարապետական դեղեցկութեամբ, և որը առնելէ ծախք հազար վեց հարիւր քսան-եօթը-եկի, օրհնուեցաւ ամսոյս 27-ին կիւրակէ օրը՝ բաւականին շքեղ հանդիսով։ Յիսունի չափ օրիորդները միաձեռակ հանդերձներով և գլխարկներով զարդարած լսեցին սուրբ Պատարագը՝ Էջմիածնի Տաճարի մէջ։ Օրհնի աւարտման Ս. Պատարագի սկսուեցաւ հանդիսի ընթացքը. նախ գնուածին օրիորդները զոյգ զոյգ և ձեռքներին մոմերով, յետոյ գնուածին Էջմիածնի Դպիրք սպիտակ շապիկներով երգելով պատշաճաւոր շարականները, ապա մի քանի Եպիսկոպոսներ և վ՝արդապետներ շուրջառներով, խաչով, խաչվառով, մոմերով եկն։ Բազմաթիւ կանայք և արք ուղեկից էին հանդիսաւոր ընթացքին։ Նորակառոյց դպրոցի դահլիճի մէջ, որի գլխաւոր պատը զարդարած էր գեղեցիկ նկարներով, օրիորդաց ձեռագործներով, կատարուեցաւ Խաչահանգիստ և օրհնութեան հանդէսը։ Յարմար ժամանակ ուսումնարանի Տէսուչ վ՝ահան վ՝արդապետ Խատա-

մեռնողը ասայ Համառօտ և ազդու ատե-
նախօսութիւն՝ իգական սեռի դաստիա-
րակութիւնից յառաջացած մեծամեծ ար-
դիւնքների մասին։ Կրօնական հանդիսից
յետոյ սկսուեցաւ վիճակախաղութիւնը և
ներկայ գտանուող հանդիսականների մէջ
նշմարվում էր համակրութիւն։

Պէտք է վկայել՝ որ ամբողջ հանդէսը
քաղցր և սրտաշարժ տպաւորութիւն
գործեց ժողովրդի վերայ։ Հետևեալ օրը
կատարուեցաւ նոյն դպրոցում օրիորդաց
տարեկան հարցաքննութիւնը, և աշա-
կերտուհիները ցոյց տին առհասարակ գո-
հացուցիչ յառաջադիմութիւն։ Ա՛ս-
ղարշապատու օրիորդաց դպրոցում ու-
սուցանելի առարկաները են — կրօնագի-
տութիւն, Հայոց լեզու և վարժչադրու-
թիւն, Ռուսց լեզու և վարժչադրութիւն,
թուաբանութիւն, ասղնեգործութիւն և
երգեցողութիւն եկեղեցական և աշխար-
հական։

Հետևեալ Յայտարարութիւնը մեր
ընթերցողաց խորին և համակիր ուշադ-
րութեան կ՚յանձնեմք։

ԱՒ ՊԱՏՈՒԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱԿԻՑ

Ի ՄԱՍԻՆ

ՆԵՐԿԱՑ ՎԻՃԱԿԻ ԳԱՍՊԱՐԵԱՆ Ա.ՔԱՏԱՆՈՑԻ

Ի ՄՈՍԿՈՒԱ

ՊԱՏՈՒԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱԿԻՑ։

Գասպարեան Աղքատանոցն տնանկ Հայերի համար ի Մոսկուա՝ հիմնուած է ի Պատուական քաղաքացւոյ Յովհաննէս Մովսիսեան Գասպարեանցի, և սկսած է իւր դործութիւնը Փետրուարի 23ին 1841 թուականի։ Գտանուում է նա այն տան մէջ՝ որ կառուցուած է նոյն ինքն հիմնադիր Գասպարեանէ, նորա սեպհական արդեամբքն, և այն հողի վերայ՝ զոր ընծայեցին հռչակաւոր բարերարքն՝ Տիարք (՞) Ծովհաննէս և Խաչատուր Ծովակիմեան Լազարեանք, և որ գտանուում է Մոսկուայի՝ յանուն Վերացման Կենսատու Սըրբոյ Խաչի՝ Հայոց եկեղեցւոյ մօտին։

Աղքատանոցիս տեսչութիւնն յանձնուում է Խորհրդարանին, որ բաղկանում է ի Նախագահ Անդամ, յերկու Կրտսեր Անդամոց, ի մի Անփոփոխ Անդամ, և ի Հոգևորական անձնէ միոյ՝ որք ընտրուում են Մոսկուայի Հայ հասարակութենէն 2 կամ 3 տարի ժամանակով։ Խորհրդարանն կառավարուում է իւր գործոց մէջ՝ ԲԱՐՁՐԱԳՈՑՆ հաստատուած Նոյեմբերի 27ին 1845 թուականի կանոնադրութեամբք։

Այս Աղքատանոցս ի սկզբան իւրում՝ ապահովուեցաւ 16,000 ռուբլի դրամագլխով, զոր ընծայեցին՝ նորա հիմնադիրն և Մոսկուայաբնակ Հայերն։

Ջկնի մահուան բարերար Գասպարեանի, նորա կտակակատարաց ջանիւք՝ ժողովուեցաւ նորա պղեայլ պարտատէրներից՝ գումար մի իբրև 23,000 ռուբլի, որ՝ Գասպարեանի մահուանէն յետոյ մնացած միւս գումարների հետ միաւորուելով՝ աճեցաւ մինչև 33,600 ռուբլի, և որ գտնուում էր կտակակատարաց լիակատար տնօրէնութեան ներքոյ. բայց յետոյ՝ կտակակատարքն՝ Պ. Բաղդասեանց և Ծովհաննեանց՝ կամելով այս օգտակար և բարեգործ հիմնարկութեան հաստատ գոյութիւնը ապահովացուցանել՝ որպէս ապաստարանի զառամեալ աղքատաց և հաշմանդամաց, բոլոր այդ գումարդ միաւորեցին Աղքատանոցիս մայր գումարի հետ, ձևղնելով իրենց տնօրէնութեան ներքոյ միայն այս գրամագլխի տոկոսները, որք համարեա թէ ամենն ի գործ են դրուում Աղքատանոցիս ծախքերը լրացնելոյ համար։

Ցընթացս ժամանակի՝ Մոսկուայաբնակ Հայերի նուիրաբերութեանց օգնականութեամբ՝ Աղքատանոցիս մայր գումարն աւելուել ևս աճեցաւ և նորա Խորհրդարանն ունի այժմ իւր տնօրէ-

նուիրեան ներքոյ մինչև 55,700 ռուբլի եւ որով-հետև այդ գումարդ ամիսուսած է երկու թաղաւորական անընդհատ արդիւնք բերող տոմսակների մէջ՝ 49,600 ռուբլի արժողութեամբ, որք տալիս են ի տարին արդիւնք 4 տոկոսիք, և միայն գումարիս մնացեալ մասնի համար ստացուում է 5 և 6 տոկոսիք, ուստի և Աղքատանոցն ունի նորանից տարեկան արդիւնք իբրև 2,300 ռուբլի, որիսի գումարդ յոյժ սակաւ է՝ նիթէ ի միտ առնուի՝ 1) թէ՝ հիւանդանոցաց և նոցա ծառաների պահպանութիւնն, որպէս և Աղքատանոցիս ջեռուցման և լուսաւորութեան, և նորա շինուածոյն նորոգութեան ծախքն՝ նստում են համարեա թէ 1,975 ռուբլի, 2) թէ՝ Աղքատանոցիս Խորհրդարանն տալիս է ծերացեալ աղքատ ազգակցաց, Աղքատանոցէն դուրս բնակողաց, ամսական և ժամանակաւոր օգնութիւն, և ըստ կարողութեանն վճարում է աղքատ ծնողաց զաւակների կրթութեան համար, որոյ վասն ի գործ է դրուում մինչև 900 ռուբլի. իսկ տարեկան ծախքն ընդամէնն հասանում է 2,875 ռուբլի, այնէ՝ 586 ռուբլի աւելի քան զմուտքն։ Աւելորդ ծախս եղած գումարն յոյսացուում է՝ նոյնպէս և յայլ համազգիներից, որք գտանուում են Մոսկուայում։

